

Բ Ա Ձ Մ Ա Վ Է Պ

Հ Ա Ն Դ Ե Ս Ի Մ Ա Ս Տ Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Հ Ա Ն Դ Ե Ս Ի Մ Ա Ս Տ Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Քննադատութիւն կարդեալուսի դրոշքեան վրայ, և թէ յորում պէտք է դնել իմաստասիրութեան հիմունքը:

« Կրկին դարձր որոմանց պէտք են մարդկան, ըսաւ երբեմն հռչականուն մատենագիրն Շաղոպոսիան, վերստին դառնալու յԱւետարան. և թէ քրիստոնէական կրօնից հիման վրայ պէտք էր դարձնալ բարեգործիչ հինաւուրց մարդկութեան, որ երթալով կ'ապականի »: Այսպէս ըսելու ենք նաև մենք, թէ՛ կրկին պարբերութիւն ժամանակի և մտաւորական յեղափոխութեանց պէտք էին մտաց մարդկան՝ վերստին դառնալու զոյգ ընդ սրտի՝ յետալական և առ ճշմարիտան իմաստասիրութիւն, և անոր խորին և հաստահիմն սկզբանց և վարդապետութեանը վրայ հիմնուելու և յառաջագիմելու: Վասն զի ինչպէս վերջնութեւր Պրակին մէջ Զանացիք ապացուցանել թէ՛ ճշգրտութիւն և:

մարիտ իմաստասիրութիւնն, այսինքն է ճեմական կամ Ս. Թովմայի, յամենայնի համաձայն կ'ընթանայ ընդ կրօնից. զոր ամենէն աւելի Պաքոնի, Գալիլէոսի և կարդեսիոսի պէս եզական հանճարներ յեղափոխեցին յԹէ դարու մէջ, անոր վերջնական և զօրաւոր յարձակմունքն և հարուածը տալով և նոր եզանակ մը ոճոյ. որոնք իրենց փորձառական, օգտաւէտ և բնաբանական նոր գիւտերուն հետ ՚ի միասին, տեսական վարդապետութեան մղար և զմարդկութիւնն ապականող հեղեղներ ևս ծաւալեցին անոր մտաւորական ասպարիզին մէջ:

Սակայն մենք զանց ընելով անոնցմէ երկուքը, որոնք իմաստասիրութեանց աւելի բնական գիտութեանց մէջ փայլ

և արդեցութիւն ունեցան, բոլոր տե- սութիւններս վերջնոյն, կ'ուզեմ ըսել, կարդեսիրտս վրայ դարձնենք:

Բայց զեւ բարոյովին անոր իմաստա- սիրական շաւղին քննադատութեան խորունկը չմտած, կ'ըսենք թէ զայն կազմող գլխաւոր կէտերն ասոնք են. ա. երկխայսակաւ ոձ. բ. այս հիմնա- կան կարծուած սկզբունքն կամ ա. աածն, խորհիւմ, ուրնմն գում. գ. խո- կոռմն է իսկոռքիւն հոգոյ. դ. Մար- մնոց եռաքիւնն՝ ՚ի տարաճորքեան է: Այս չորս անկեանց վերայ ձգք ա. հաւաւոր կարդեսիրտ իւր շաւղին, ո- րուն յառաջ խաղաղին ապա՝ ուրիշ այլ և այլ խոտորութեանց ևս դուռ կը բանայ ՚ի զանազան մասունս յիւրումն իմաստասիրութեան:

Այս հանճարեղ՝ բայց վտանգալից և խորշիւի շաւղին ծրագիր մը գծելու համար, կ'ուզեմ բուն հեղինակին, կամ լաւ ևս ճարտարագետին յատուկ վկայութեամբն և գոյնեղովը նախ ներ- կայացընել զայն. որուն ինչպէս բաց- ման՝ այսպէս նաև արշաւանաց, ԺԹ դարէն աւելի՝ ԺԷ և ԺԸ դարուց մէջ հանդիսակից և ուղեկից եղան խուռն բազմութիւնք, յամենայն կողմանց, բայց մասնաւոր կերպով Գաղղիոյ եռան- դուն և նորասէր պատանեկութիւնն. Պոսիւէի, Ֆենելնի, Բապալի և ասոնց նմանեաց լուսաւոր հանճարն անգամ, մտան թերես այն ասպարիզին մէջ, բայց այօք բացօք և զամենայն ստուգու- թիւնս կանխաւ դնելով, և ոչ թէ անոր վարդապետութեամբն և երկբայա- կան ոճովն իրենց զամբարափայլ մշտ- քերն արտացոլցին: Այլ մանաւանդ թէ կարդեսիրտեան դպրոցի անունը միայն և ուղղութիւնք պահեցին. իսկ իրենց հանճարոյ ամենայն երկունքն՝ անկէ աւելի Ս. Օգոստինոսի, Տերտու- ղիանոսի, Գրիգորի Նազիանզացւոյ, Նիւսացւոյն և Ս. Թովմայի սկզբամբք զանգեղով, գոզքես նոր իմաստասի- րական կազմակերպութիւն մը հաս- տատեցին, անման կարդեսիրտ: Ապա ի՛նչնէլ այն դրութեան մանրամասանքը,

և յետ ցուցանելոյ անոր անտեղու- թիւնքն և անընդունելի ըլլալը՝ հաս- տատել սկիզբն իմաստասիրութեան, այսինքն թէ ինչ բացայայտ հիման վրայ պէտք ենք յենուլ՝ իմաստասիրե- լու կամ զճմարտութիւնս ստանալու համար, որ ուրիշ ապացուցութեանց կարօտ չըլլայ:

Իրաւամբ կը պարծի տակաւին Գաղ- ղիա ՚ի կարդեսիրտ, ինչպէս Անգղիա ՚ի Պարնս վերուլամիացի, և Իտալիա ՚ի Գալիլէոս. վասն զի ինչպէս ծագումն և յառաջխաղացումն արդի փորձաուս- կան կամ գործնական իմաստասիրու- թեան Անգղիոյ և Իտալիոյ՝ Պարնի և Գալիլէոսի, այսպէս ալ Գաղղիան՝ կար- դեսիրտի պարտական է, եթէ անոր (իմաստասիրութեան) պատմութեան հարցընելու ըլլանք:

Այս եզական հանճարը, զոր 1596ին ընծայեց Գաղղիա բովանդակ մարդա- յին ընկերութեան, ՚ի ծնէ պերճացած էր ամենայն բնական և մտաւոր բարե- մասնութեամբք: Յիրաւի, ոչ միայն ա- մենայն բանի հասնող և խորահայեաց իմաստասէր ոք էր, այլ նաև գերա- ծայրեալ մաղէմաղիկոս և բնագէտ յոքնագիւտ. միով բանիւ իւր բարձր արժանապատուութեամբն և բազմա- գանձ ծանօթութեամբք՝ զորս ամբա- րեց՝ ոչ միայն ՚ի մատենից այլ և յու- ղեորութեանց, զոր կատարեց իւր զի- նուորական ընթացից մէջ, կ'երևցընէր թէ ոչ կամ չուտ՝ քան զամենայն ոք գեղեցիկ պիտի փայլէր իւր դարուն լուսաւորաց մէջ, բայց ՚ի մասնաւորի՝ Գաղղիոյ հորիցոններուն վրայ:

Իմաստութեան հրաբորբք սէրը, զոր անդատին ՚ի պատանեկութենէ յիւր սրտին խորը կը կրէր, առաւ զայն իւր շարժուն ընթացքէն և հայրենեաց քաղցր ծոցէն, քան զոր չիք ինչ մեծա- գոյն Գաղղիացւոյ մը համար, և վարեց ՚ի Հոլանտա՝ ձգելով քսանամեայ խո- րին առանձնութեան մէջ: Մտաւ ծած- կուեցաւ ՚ի մարդկանէ՝ պայծառագոյն արուեսակը ԺԷ դարուն, ծածկուած է անոր հետ նմանապէս Գաղղիոյ բաղըր:

Դիտենք ուրեմն, և զննենք մէկ մ'այս լուսաւորն՝ իմացականութեան հետազոտակար. տեսնենք թէ ինչպիսի աշխարհաց մէջ կը թեւակոխէ. ինչ սահմաններ և ինչպիսի առանցից վրայ կը հորովի. ինչ հանճարեղ արեղակներու և կամ գիտաւորաց հետ կը շփուի. ինչ փոփոխութեան կերպարանք (phases) կը կրէ, և թէ վերջապէս ինչ կերպով պիտի վերադառնայ և ծագէ մարդկեղէն իմաստութեան հորիզոնին վրայ : Բոլորովին լուսապայծառ՝ թէ անփարատելի ստուերներով բծաւորեալ : Վասն զի եթէ զգալի և պայծառքան զամենայն աստեղս երեցող արեգակն անգամ, որ բնութեան հաստատուն օրինօք կը վարուի, ազատ չէ ՚ի ստուերաց և ՚ի խաւարմանէ, սրչափ առաւել ուրեմն այս մտաւոր և ազատ իշխան հանճարը, որ կարող ևս է զէմ կենալ անյեղի օրինաց բնութեան և ճշմարիտ լուսոյ բանին և ըստ կամս փոփոխել զայնս, եթէ ՚ի ներքուստ յափրջ տակելով՝ կ'ուզէ յառաջ ևս մղել զայն անդրքան զսահման՝ փառասիրութեան հոգին : Դիտենք զայն միով բանիւ աւոր առանձնարանէն աւելի՝ մտաց և երկասիրութեանց խոր թեւակոխելով, որովհետև ինչպէս մարդկութիւնն՝ այսպէս ալ մենք ո՞վ զիտէ թէ անոր ազդեցութիւնը կրած չենք և կամ պիտի չկրենք երբեմն, թէպէտ և բարեմտութեամբ և առանց անդրադառնալու :

Կարդեսիտ իւր առանձնութեան առաջին պարբերութեան մէջ հանդիպեցաւ Եւրոպիոյ մտաւոր յառաջադիմութեան անձնաւորութեանը, որ է. Պօլսոյ անկմանէ վերջը յԵւրոպա ապաստանած պղատոնականաց թելադրութեամբ՝ ձեռք ձեռքի տուած պղատոնական իմաստասիրութեան՝ և հետաւորք իտալական կամ արիստոտելեան վարդապետութեան՝ կը հալածէր զայն. այս հետեւեալ կրկին թերութեանց պատճառաւ, որք են միակերպութիւն ձեռք և լեզուի, երկրորդ զանցառութիւն մագեմագիլական և բնական գիտութեանց :

Իսկ երկրորդ պարբերութեան մէջ տեսաւ թէ և թՉ դարու գրականութեան և գեղեցիկ արուեստիցս ոգին. որ ծաղկապսակ և ՚ի հանդերձս փափուկ գոգտրիկ ոճոյ զարդարեալ առ ինքն կը հրաւիրէր հանճարեղ մատենագիրս և պուէտս թէ. դարուն, որոնք արդէն իսկ պատրաստ և զէն ՚ի ձեռին՝ հարուածել կը ջանային գիմաստասիրութիւն ճեմականաց ամենուրեք : Լաւրենտիոս Վալլա՝ իտալիոյ մէջ, Պետրոս Ռամուս՝ ՚ի Բարիզ, Բարակելլոս՝ բժշկութեամբ, տարրաբանութեամբ և աւտուածաբանութեամբ՝ ծածկագէտ մութեանդութիւնը կը տարածէր. Էրազմոս Ռոդէրտամցի և Լուդովիկոս Վիլիէս ալ գեղեցիկ մատենագրութեան ճաշակն. Յորդանոս Բոուենոս՝ բաղմաստաւածութիւն կը քարոզէր. Բեռնարդոս Տելեսիոս՝ ճեմականաց հակառակ Տելեսեան ըսուած լսարանը կը հաստատէր. Բերկարդոս՝ Բիզլայի մէջ յոնիական դրաց կը վերականգնէր. Մոնդայն՝ իւր վարդապետութեանց մէջ սկեպտակաութիւնը ձեւաւորելով՝ գիտութեանց և կրօնից հիմունքը կը նկրտէր խախտել : Համառօտ ըսելով՝ այս ժամանակ ամենեւին իմաստասիրական հաստատուն շարժ մը չէր տեսնուեր, որուն հիման վրայ յեցած՝ կարենար Եւրոպա անխտոր կրօնից մէջ յառաջադիմել : Բաց յարիստոտելեան կամ՝ ճեմական շաւղէն, որ իբրև միջակէտ հաստատութեան կեցած՝ ամենուն զէնքը և զօրութիւնն իւր վրայ կը դարձնէր, որոնք պատերազմոց հրօսակներու նման ամենուստ կը ռմբակոծէին զայն. այլ ընդհակառակն ամենամեծ խառնակութեան խառնազաղան մը կը տեսնուէր Պիլթագորի, Պարմենիդեայ, Պլատոնի և Չենոնի սկեպտական վարդապետութեանց, որ կ'ուտէր և կը մանրէր, աւանդ, թէ դարու մարդկութիւնն և Եւրոպիոյ բարոյականը :

Կարդեսիտ իւր ուսումնական առանձնութեան երրորդ պարբերութեան մէջ մէկ կողմէն տեսաւ Լուտերի վեժած նորակրօնութեան և ազատ սպա.

գրութեան անձնաւորութիւնն, որ իբր համբաւարեր աղատական նոր յառաջխաղացութեան, զամենեսեան 'ի մտաւորական յեղափոխութիւն և ընդդէմ կրօնից կը կոչէր: Իսկ միւս կողմանէ՛ Պարոնի այս ժողկեալ հանճարոյ մը կրկին ունի երկասիրութեանցը, Յաղազը յարձրութեան և յառաջխաղացման գիտութեանց, և Նոր գործարան (Nuovo organo), որով բարբոսի նոր և փորձառական մակածութեամբ օգտաշահ և գեղեցիկ գաղափարաց կարգ մը կը հաստատէր, և բովանդակ մարդկային մտաց և կարողութեանց ծանօթութիւնը դասակարգելով՝ առաջուր կը լախճախէր ճեմականաց տեսական գրութիւնն և քան զփող աւազափող՝ սաստիկ կը հնչեցընէր իւր յայլթանակը՝ 'ի լուր ամենայն աշխարհի: Սակայն թէ՛ սլէտ և յաղթական թէ՛ սլէտ և ամենուն ծանօթ, այլ ըստ արժան բաւականին սեփական վարդապետութիւն չունենալուն պատճառաւ, չէր կարող իմաստասիրական նոր դպրոց և գրութիւն մը հաստատել: Միայն հանճարեղաց մտքերը կը պատրաստէր առ այն, և մեծ ասպարհի մը մէջ մտնելու զունեքը կը բանար, անիշիղճ և անխոհեմ դաւաճան հանդիսանալով արիստոտէլեան վարդապետութեան, որուն պատճառաւ իրաւամբ ցայսօր կը մեղադրուի:

Ուստի այս պարագաներս տեսնելով կարգեսիրոս արտաբուստ, և 'ի ներքուստ ալ — 'նախ՝ իւր անգլիմադրելի և բուն հանճարը, որուն գերազանցութիւնը՝ հարկ էր որ շուտով վերելք մը գործելով՝ 'ի վերայ այս ամենայնի՝ անցանէր զանցանէր բոլոր իւր դարուն մտքերը: Բ. իւր խորին և նախատես հայեացքը, որով իմացաւ այս պարագաներէն ժէ՛ դարուն ոգին և դատեց թէ՛ ուղբի վրայ կեցած է կազմ՝ և առաջնորդի մը կը սպասէ Եւրոպիոյ մտաւորական երեսը փոխելու համար: Գ. իրեն անձնական բարեմասնութեանց և այն ամենամեծ գործոյն պայծառ ճանաչողութիւնը, որ համոզեց զնա, թէ՛ ինքը իմաստասիրէ գուրս՝

ըլլալով նաև աստեղաբան ոք, բնագէտ և մագէմադիկոս՝ կարող էր առանց ժայռերու և ալէկոծութեանց հանդիպելու՝ իւր ժամանակի յարմար ուսումն և վարդապետութիւնն աւանդել. Գ. այս գիտողութիւնս, թէ՛ ինքը գերաստիճան հնգւորակն (spiritualiste) ըլլալուն պատճառաւ՝ դիւրաւ պիտի յայտէր գերածայրեալ և խորհող մտքերն անգամ առ ինքն ձգել. Ե. և թերևս զլիսաւոր տեսակէտն էր կարգեսիրոսի, ջանալ իւր նորասէր և բազմապիսի մրցութեամբք աղմկեալ դարուն՝ նոր և հաստատուն շաւիղ մը բանալ, և անով վերջ տալ ամենայն մտաւորական զինուց և զինուորութեանց և սկեպտիկեան խռովութեանց, և անվերջով խաղաղութիւն մտցընել գիտութեանց և կրօնից մէջ: Վասն զի Յակովբ Պայմէսէն սկսեալ ամենայն ուղղադատ իմաստասէրք և քննարանք, որոնք զրեցին և խօսեցան մինչև ցայսօր կարգեսիրոսի վրայ՝ թողլով անոր իմաստասիրական շաւիղն, անձն և բարեպաշտութիւնը գրեթէ միշտ դրուատեցին, և նոյն իսկ իմաստասիրական պատմութեան էջերն անգամ՝ անոր հոգւոյն և հանճարոյ մեծութիւնը դարուց 'ի դարս գեռ կը հռչակեն: Արգարև անոր լեզուին և երկասիրութեանց քաջահմուտ երող ամենայն ոք, յայտնապէս կարող է նկատել ժէ՛ դարուն այս վեմամախոհ և բարձր հանճարոյ անձնաւորութեան վրայ՝ վեհանձն և արդարամիտ անկեղծութիւն մը, մարդկային տկարութեանց խորին զգացմունք և կրօնական ներշնչութեամբք զեղուն և եռանդազին սիրտ մը, և մարդկային ոյրէն և ունայնասիրութեանէ աւելի՛ զիմաստութեան սիրող, անասնձ և գործօն հոգի մը:

Յետ նկատելու 'ի հեռաստանէ կարգեսիրոսի ներքին և արտաքին շարժառիթքն և անոր տեսակէտն, քայլափոխ մի և ս մօտենանք անոր:

Հանճարներու իրարու հետ ունեցած հաղորդակցութիւնն և փոխադարձ աղեցնութիւնն անբացասելի ճշմարտաւոր

թիւն մ'ըլլալով, հարդեսիոս ամենայն ինչ պատրաստելէն յետոյ իւր մտաց ընդունարանին մէջ, հարկ էր որ վերջին փորձ մ'ալ փորձէր, այսինքն երթալ շփուիլ սիրտ ընդ սրտի և միտք ընդ մտաց, եթէ կարելի է, Ս. Թովմայի և Օգոստինոսի պէս ճշմարիտ ի մաստասիրութեան դարագլուխ կազմող կրկին լուսաւորաց հետ, չըսեմ բողոքովն անոնցմէ լուսաւորուելու դիտամամբ, այլ կայծ մը միայն իւր 'ի բնէ արգասաւոր մտաց և հանճարոյ լուցկիքը արծարծելու, իւր կրօնասէր խիղճը հանդարտեցնելու, և թերևս իսկ յապագայից առ ինքն համակրութիւն և անոնց վրայ ալ ապա ազդեցութիւն ուննայլու վախճանաւ: Ազուի նացւոյն երկասիրութեանց մէջ, որուն ոճին ատեցող էր անշուշտ՝ բայց վարդապետութեանը սիրող, այս ընդհանուր՝ բայց իրեն 'ի նպատտ դիտողութիւնն ըրաւ. որ հրեշտակն դպրոցականաց ամեն նիւթ և ամեն յօդուած երէ, աղյուքս պայմանական կամ թէաական ձևով կը սկսէր և ընդդիմախօսի մը բերանը դրած ժխտողական առարկութեամբք: Իսկ Հիպպոնոյ հայրապետին Առանձնախօսութեանց մէջ ալ գոգցես բողոքովին գտաւ երկրաշակաւն ունոյ նախազարգափարն, գէթ ըստ առտաբին ձևաւորութեան՝ յորում Օգոստինոս և իւր Բանը իրարու հետ կը խորհրդակցէին յաւիտենական ճշմարտութեան և Աստուծոյ գոյութեանը վրայ: Ուր այսպէս կը հարցընէ Բանն ցՕգոստինոս. « Գիտես եթէ գոս. — Գիտակ եմ: — Ուստի գիտես. — Անգիտանամ զայդ: — Գիտակ ես դու, թէ խորհիս. — Գիտեմ: — Ստոյգ իմն է ուրեմն թէ խորհիս »:

Ասիէ վերջը հարդեսիոս գինքն իր տեսութենէն կ'ուզէ ծածկել անհետացընել՝ քան թէ հետախուզին, հրաւեր կարդալով առ իմաստասէրս. թէ իմաստասիրել աղէկ սկսելու համար պէտք ենք վերածնանիլ, այսինքն պէտք է թողուլ նախնաբար մինչև ցայժմ ըզգալի աշխարհաց զմեզ շրջապատող

առերբքն և շիջուցանել մտք զլուսաւորս երկնից. հարկ է խափանել մեր ամենայն զգայարանաց գործառնութիւնքն, որոնք զմեզ այն արտաքին աշխարհաց հետ կը հաղորդեն. պէտք ենք թողուլ մանկութենէ 'ի վեր ստացած ամենայն եկամուտ գաղափարնիս և զիտութեանց ծանօթութիւնքը՝ երթալ ընկզմիլ յանդունդս մտացութեան. պէտք է կասիլ ոչ միայն 'ի խուզարկութենէ այն ս'զբանց և ճշմարտութեանց, որոնք ցուցակութեան պէտք ունին մեր մտաց ըմբռնելի ըլլալու համար, այլ նոյն իսկ ամենաբացայայտ, ընդհանուր, անփոփոխ, յաւիտենական և ամենուն 'ի բնէ ծանօթ առածնեին ևս, որոնք բնաւ ամենեին ապացուցութեան չեն կարօտիր և արեգակէն ալ աւելի պայծառ կը փայլին. օրինակ իմն. Բոլորն՝ մեծ է քան ըզմանն. 2, և 2 ալ յորս կը կազմեն: Վերջապէս թողունք մեր հոգւոյն նիւթազանգ և յօշոփելի բնակարանն ևս, ըզմարմին, հանդերձ իւր ներքին և արտաքին յօժարութեամբք և բնազդմամբք, և զրակահապէս նախ ամեն բանի վրայ տարակուսիք, ամենայն ինչ բացասենք և ստիպենք մենք զմեզ խորասուզիլ յանդունդս սկեպտիկիան ընդունայնութեան, և որ զարմանալին է, միանգամայն 'ի խորս իւր մտածութեանը, ծանօթութեանց գերագոյն հիմունքը հետախուզելու աղաղաւ: Հօն, կ'ուզեմ ըսիլ ամեն բանի բացասութեան և իւր էութեան մէջ փակուելով, ինչպէս ազահն՝ իւր ստորերկրեայ թաղուած գանձն՝ այսպէս ալ կարդեսիոս, անտես կ'ընէ յաչաց իւրոց և մտաց ուրիշ ամենայն իրականութիւնքը, որ այլ ազգ են և բողոքովին անկախ իւր սեփական մտածութենէն:

Եթէ հարցընելու ըլլանք զգաղիացի իմաստասէրը, թէ ինչո՞ւ համար, և թէ այս բացասութեան անմիջական հետեւանքն ինչ պիտի ըլլայ, կ'ըսէ. Որպէս զի կարենանք այնպիսի շաւիղ մը հաստատել, որ կարող ըլլայ մատակարարելու մեզի ամենայն ապացոյց, և մտաց

կատարելապէս յաղթահարիչ համը
զուսմ: Այլ թէ ինչպէս. կարգեցիտսի
ուշ գնեցիք. վասն զի այն ահաւոր և
կղզիացեալ և ամալի միայնութեան
մէջ, ուր ամենայն ինչ զաղարեալ է,
և լուս կայ, ներքին գիտակցութիւնը
միայն կանգուն կենալով յանդիման
աւերեալ և յունայնութիւն վերածուած
աշխարհի դիմաց՝ կ'ազդէ ինծի թէ
Խորհիմ. արդ որովհետև « Խորհիմ, ու
րեմն գում: Ահաւասիկ հիմնական ըս-
կիզքն իմաստասիրութեան և ճանաչ-
ման անձին գոյութեան՝ կարգեցիտսի:

Ներքին գիտակցութեան այս սկզբան
(principe) վրայ հիմնելէն յետոյ իւր
երկրայական ռձն, այսպէս կը ջանայ
նա վերստին լուսաւորել և իրականա-
ցընել իւր քիչ մը յառաջ բացատրող ու
ջնջութեան խոր խաւարին մէջ ծած-
կուած ամեն բաներն. և ՚ի հիմանց
յաղթահարել իւր մտաց խորհող մասին
սկեպտականութիւնը, բսելով. Արդ ու
րովհետև իմ ներքին գիտակցութիւնս
լուեկեայն ինծի կը թելադրէ թէ ես էակ
մ'եմ ՚ի բնէ այլայլական, սահմանա-
ւոր և անկատար և գրեթէ յամենայնի
որիչին կարօտ, ուրեմն պէտք է որ ՚ի
հարկէ ըլլայ և է իրօք քան զիս գերա-
բուն էակ մը, նոյնն և անստեղծ, յաւի-
տենական, անսահման և ՚ի բնէ կա-
րևոր. և նա է սկիզբն և պատճառ իմ
գոյութեանս, վասն զի ես ինծմէ չեմ
գոյացած ինչպէս չեմ կրնար զիս ոչըն-
չոցընել: Ահաւասիկ աստուածածանօ-
թութեան գաղափարն, զոր ոչ ոք կա-
րող է ժխտել՝ առանց ժխտելոյ իւր
ներքին գիտակցութիւնն, որ անկարե-
լի է:

Այս գաղափարս՝ զոր իւր մտածու-
թեան խորը կը գտնայ կարգեցիտս,
թողունք առ ժամս քննելով թէ բա-
նալարելով արդեօք, եթէ նախնաբար
(à priori) նկատելով. այս գաղափարս
կ'ըսեմ, զոր նա պայծառ և որիչ գա-
ղափար կ'անուանէ, ուրիչ ճամբայ
մ'ալ կը բանայ գալ ՚ի ծանօթութիւն
ոչ միայն մեր ներքին աշխարհի կարո-
ղութեանց, ոչ միայն մեր զգայարանաց

և մարմնոյ գոյութեան, այլ նոյն իսկ ՚ի
ծանօթութիւն գոյութեան բովանդակ
նիւթական համագոյից, և ՚ի հաւատոց
յայտնեալ ճշմարտութեանց: Էւ ստու-
գիւ, եթէ Աստուած է արարիչ մեր
ամենուս էութեան, եթէ ամենայն ինչ
կը հաղորդի անոր գերաբուն բարո-
թեան, և բանն աստուածային և հան-
րական է, որ կը լուսաւորէ և կ'առաջ-
նորդէ մարդկեղէն բանին առ ճշմար-
տութիւնն, ուրեմն պէտք է որ ՚ի բնէ
ճշմարիտ ըլլան և են իրօք ամենայն
էակը ինչպէս զոյ Աստուած, կ'ըսէ կար-
գեցիտս: Իսկ որովհետև գոն ամենայն
էակը ճշմարտապէս, և առաջօք կամ
մտացածին ցնորք չեն այն ամենայն
բաները՝ զոր կը հոսնենք և կը ջուա-
փենք, ուրեմն ՚ի հարկէ ճշմարիտ ըլլա-
լու են ՚ի խորհուրդս մտաց՝ նաև ա-
նոնց գաղափարքն և ծանօթութիւնըր-
ապա թէ ոչ՝ Աստուած կ'ըլլար հեղի-
նակ այնպիսի ստութեանց և ցնորից,
իրապէս ներկայացընելով զանոնք մեր
մտաց և զգայնոց, որոնք իրօք չեն:

Այսպէս ուրեմն հասնելով կարգե-
սիտս Աստուծոյ, անձին և աշխարհի պայ-
ծառ ծանօթութեան, կ'ըսէ ասիկ
վերջը շերտ՝ որդի նման թողուլ իւր
նախնաբար ունեցած և բացասած ան-
կատար ծանօթութեանց կեղևներն, և
ելլել դուրս իւր անձնական պատենին
մէջ փակուած անձուկ բանտարգելու-
թենէն, նորանոր և իր թէ կատարելա-
գոյն ծանօթութեանց թոհիչներ զգնե-
լով, կ'ըսէ Փայիզիտս, իւր իմաստասի-
րական պատմութեան մէջ, զգիտալով
թէ հին ծանօթութեանց շառաւիղներ
են անոնք: Սակայն իբրև փորձառու
իմաստասէր ոք և սկեպտիկեան հօն
մտնելով գաղափարական ոք գուրս ե-
լաւ և վարդապետական. որ է բսել
ինչպէս յառաջ նոյն և յետոյ նուազ
իմաստաստոհ:

Ելաւ անհա արգարև կարգեցիտս,
յետ, ձգելոյ իւր իմաստասիրութեան
խարխիւն, և սկսաւ անոր առանցիցը
վրայ կատարել իւր մնացած կենաց և
գիտութեան շրջանն, թէ՛ դարու կերպ

կերպ միգամամներով լցուած մտաւո-
րական հորիզոններուն վրայ: Կարգե-
սիրտի պէս լուսաւոր հանճարոյ մը, որ
երկայն ատեն ծածկուած էր և անակն-
կալ կերպով երևցաւ, միայն 'ի դէպ կու
գար ուսմկին նախապաշարման վրայ
հաստատուած այս առածն, թէ նոր-
օրինակ նշան մ'է այս զառնադէտ յե-
ղափոխութեանց:

Յիրաւի այնպիսի հակասական և
վտանգաւոր շաւղի վրոյ հաստատուած
հանճարոյ արուեստին և անոր օրինօր
վարուող միտքն՝ որչափ և լուսաւոր ըլ-
լաթ և 'ի սկզբան ապահով կարծուած,
սակայն գիտութեան անհուն ասպա-
րիզին և զգուշաւոր սահմանաց մէջէն
անցած ժամանակ, հարկ էր, որ նա
ինքն ևս մոլորակ անուանեալ լուսաւո-
րաց նման՝ տխուր կերպարան և խա-
ւարմունք կրէր, և հարկ անհրաժեշտ
վասն զի ինքն ալ 'ի սկզբան մէկ մը
մոլորեցաւ, փորձառութեան և բընու-
թեան հասարակ ճամբէն խոտորելով:
Իայց սր էր թէ 'ի նա միայն կատա-
րուած ըլլային այս տխուր գուշակու-
թիւննիս և շանցնէին այսր քան ըզ-
գարն ժէ: Ս.Ղ. Ինչպէս արեգակը խա-
ւարած ժամանակ՝ իրեն հետ կը մը-
թագնէ նաև զամենայն երկիր՝ որ իւր
հետոցը կ'արբանեկէ, այսպէս ևս մեծ
լուսաւորն Գաղղիոյ՝ շուտով պիտի խա-
ւարեցընէր իւր ընթացիցն և շաղին հե-
տևող մտքերն, և առ ինքն ձգէր կրը-
կին դարուց ուշն և քննադատութիւնն:
Եղան արդարև ոմանք որք բարձրացու-
ցին զնա մինչև յաստեղս, անոր ամեն
բանը 'ի բարին և յուղիղ մեկնելով. ե-
ղան և են դարձեալ այլը ընդհառակն
որք մոլեռանդութեամբ շարաշար կը դա-
տափեան զնա յամենայնի: Իսկ մենք
'ի նկատի ունենլով Ս. Օգոստինոսի առ
Տերտուղիանոս գուրցած այս գեղեցիկ
առածը, թէ կը յարգեմ ակնր հան-
ձարև և ակնը, և մոլորութիւնները
կը դառնայարտեմ. կ'ուզենք այս երկու
ծայրայեղ կուսակցութեան մէջն ունել,
և ըստ ներկայ դարուս աչալուրջ քննու-
թեան դատել անոր դրութիւնը: Ուս.

տի ասկէ վերջը անոր վարդապետու-
թեան խորը անցած և անաչառ քըն-
նութիւննիս ըրած ժամանակ, չի կար-
ծեն մեր ընթերցողը՝ թէ ծածուկ 'ի
կրից շարժեալ անակնկալ լեզունիս
'ի շարախօսութիւն կարգեսիրտի կը
փոխենք, և կամ նախնաբար անոր
ընծայած գրուատեաց հակառակ կը
գործենք. ոչ. վասն զի մինչև հիմա
տուած գովեստնիս անոր հանճարոյն
անձնակաւ բարեմասնութեանցը կը
վերաբերէին, որուն իրուամբ առա-
ւել ևս արժանի է. Իսկ այժմ անոր
իմաստասիրական դրութեան և վար-
դապետութեանց վրայ է խօսքերնիս:

Յորովը յերևելի մատենագրաց Գաղ-
ղիոյ և քննադատից, Վիլմէնի և Բու-
ժուլայի հետ, չեմ գիտեր արդեօք կար-
դեսիրտեան դրութիւնը պաշտպանելու
դիտմամբ եթէ Ս. Օգոստինոսի փառքը
պանծաղընել ուզելով, այս վերջինս կը
համարին նախագտակ երկարյակաւ
ոճոյն կարդեսիրտի, ինչպէս յառաջ ը-
սինք, կամ իւր ևս բանով՝ առաջնոյն
դրութիւնը նոյն համարեցան վերջնոյն
հետ: Սակայն այս մատենագիրներէն ա-
ւելի ընդհանուր իմաստասիրաց կար-
ծեացն ու զնենլով, Ս. Օգոստինեայ և
կարդեսիրտի վրայ եղած առողջ և անկող-
մնասէր քննադատութիւնն ստուգիւ բո-
լորովին հակառակը կ'ապացուցանէ:
Դիտենք այն երկուքին երկրայական ոճ
հնարելու վախճանը, առ այն հասնելու
գործածուած միջոցներն և այլուր ըրած
աշխարհածանօթ վարդապետութիւնը:

Յիրաւի, մեծիմաստ պատգամատուն
Հիպպոնայ, բաց 'ի քանի մը նոր պղա-
տոնական և աղեքսանդրեան զպրոցի
գաղափարներէն, որոնք Կղեմմսի, Ս.
Յուստինոսի և շատ եկեղեցական հարց
հասարակ էին, իւր ընդհանուր իմաս-
տասիրական վարդապետութեանը մէջ
արիստոտելեան կամ ճեմակակ զպրո-
ցի աշակերտ էր. Արիստոտելի վարդա-
պետութիւնը, որուն տեսակարարու-
թիւնները (categoremi) 'ի պատանե-
կութեան հասակէն բերնուց սորվե-
ցաւ, և գեղեցիկ մեկնարանութեամբ

կ'արտասանէր, այնչափ ժամանակ Մա նիքեցեոց աղանդին մէջ պահեց զնա, մինչև որ իւր գարձին ժամանակ կամ անմիջապէս ետքը Ս. Ամբրոսիոսի ձեռքով անոր թերութիւնքը ուղղեց զգալարանականութեան նկատմամբ՝ Պղատոնի տեսական, և բարձրհայեաց գաղափարաց տեսութեամբը։ Այնպէս որ կրնանք ըսել թէ անկէ վերջը Ս. Օգոստինոս Պղատոնի իմաստասիրութեան ուղղութեանցը հետեցեալ առանց պղատոնական ըլլալու, և Արիստոտէլի զգալարանական կարծուած թերութիւններէն հրաժարեցաւ առանց դադարելու արիստոտէլեան ըլլալու՝ որով և իտալական իմաստասէր կոչուիլ, որուն դրութիւնն բոլորովին հակառակ է կարդեսիոսեան դրութեան։ Վասն զի առաջինը առանց մերժելու իմացականութեան անկախութիւնն՝ ըստ բազում գլխոց՝ ի զգայարանաց, և անոր ազատ և անդրադարձ գործողութիւնքը, զոր ումանք յանիրաւի կը մեղադրեն, կը վարդապետէ, թէ Չիք ինչ ՚ի միտու, որ լիցէ շեալ նախ ՚ի գգայոշնու (իմա եկամտու գաղափարաց նկատմամբ)։ Իսկ վերջինը բացասելով ամենայն իրաց և զգայարանաց ստուգութիւնը, ներքին գիտակցութեան վրայ կը հաստատէ ամեն բան։ Բ. Ս. Օգոստինոս միայն իւր մէկ երկասիրութեան, կ'ուզեմ ըսել Առանձնախօսութեան մէջ, Աստուծոյ ծանօթութեան հասնելու վախճանաւ, որ իսպառ աննիւթ և անտեսանելի ըլլալով անկարելի էր զգայութեամբ ճաննել, կ'ուզէ բանին ապաւինիլ, վասն զի զգայարանաց ձեռնտուութիւնն որչափ ալ կարևոր համարելու ըլլանք առ այս, սակայն միշտ իմացականութեան և իւր ներքին գիտակցութեան ձեռքով, կարելի էր զգայարանաց տեսած և շոշափած նիւթական յարգասեաց ամբառնալ ՚ի ծանօթութիւն գերագոյն պատճառին։ Իսկ Կարգեսիոս ոչ այսպէս. կ'ուզէ նա բովանդակ իւր վարդապետութիւնն և մարդկային ամենայն ծանօթութեանց հիմն՝ զգիտակցութիւնն զնեւ կ'ուզեմ ըսել ներքին և արտաքին

իրուց. բայց որ ամենէն աւելի զարմանալին է՝ երկրայական ոճով կամ բացասելով, որով ինքն իրեն կը հակասէ։ Գ. Օգոստինոս յայտնապէս կը ծանուցանէ՝ թէ ՚ի ձեռն զգայարանաց իբրև նաու՝ ՚ի խնդիր ելած է յաւիտենական ճշմարտութեան. իւր խնդրած և անոնց զորած այս ինչ կէսն հասնելէն յետոյ՝ հօն կը թողուր զանոնք, և անկէ վերջը մտաց և իմացութեան առագաստը կը բանար։ Իսկ գաղղիացին ընդհակառակն իբրև կէտ բաժանման զնելով ի մաստասիրութեան և կամ խուզարկութեան ճշմարտութեան գերկայաշարքն, նր' կը մերժէ նախ բացէ ՚ի բաց զգայնոց գոյութիւնն անգամ, հանդերձ գործողութեամբը նոցին՝ որ ընդ մտաց, Գ. ի մաստասէրն Հիպոկոնայ իւր բանին հետ բրած առանձնախօսութեամբը՝ ոչ թէ իմաստասիրական շաւիղ մը կամ թէ հիմն խուզարկութեան ամենայն ճշմարտութեան, այլ նոր ընծայութիւն մ'ընդդէմ սկեպտիկեանց կ'ուզէ անշուշտ հաստատել. և զեռ աւելի ճիշդ խօսելով, քննութիւն ինչ կ'ընէ մարդկային կարողութեանց, ներքին գիտակցութեան հոգւոյն, անոր յատուկ գործողութեանց և գաղափարական կարգաց, որոնք տնկակից են իմացութեան։ Սակայն որ ամեն բանէ աւելի կը հարուածէ զկարգեսիոսեան դրութիւնն և անոր պաշտպաններն՝ է Ս. Օգոստինոսի աստուածածանօթութեան ՚ի խնդիր ելելէն յառաջ առ այն վերուղղած այս արտառուչ և լիահաւատ մտղթանքը, թէ, « Գու, Տէր, որուն չարը չէ կարող վնասել, չնորհէ ինձի որպէս զի ունկնդիր ըլլամ քու ձայնիդ »։ Ս. յս՝ իրաւցընէ յայտնապէս կ'ապացուցանէ թէ Հիպոկոնայ հայրապետն ոչ թէ՛ տարակուսելով, այլ մանաւանդ անտարակոյս յաւիտենական ճշմարտութեան վրայ հաստատուած՝ նախ կ'ուզէ միայն իւր մտաց չնաշխարհիկ հանդէսը ցուցնել։ Այլ Կարգեսիոս, ինչպէս ըսինք, դժբաղդաբար բոլորովին ասոր հակառակ կը դորժած է. զօգցես անոր արտաքին ձեռն խարուելով։ Ո՛րչափ անգամ ար-

դարև մեծամեծ հանճարք՝ իրարու մե-
ծադոյն խորխորատներ կը բանան: Ո-
րովհետև անոնց մէկմէկու հետ հա-
զորդած ժամանակ՝ անթափանցիկ մար-
մին մը, յաճախ անոնց հոգւոյն ներքին
գաղտնիքն և սրտի ամենանուրբ թըր-
թումունքը կը սրտէ, որ իրենց մի մի-
այն տրուած է գիտնալ: Սակայն և
այնպէս կարգեսիրոս չիմացաւ այս
գաղտնի գորութիւնը, և կամ իմանա-
լով հանդերձ՝ կարծեց թէ անոր ալ
կարող է յաղթել. և երբ այսպէս ամե-
նայն դժուարութեանց յաղթանակած,
Օգոստինոսի սուր հանճարոյն խորն ան-
ցած և անոր համախօհ կը համարէր
զինքը, տեսէք արդէն թէ սրչափ հե-
ռու գտնուեցաւ անոր տեսակէտէն. մա-
նաւանդ թէ անոր հակաբեռնին վրայ:

Իրն այսպէս պարզելով, յառաջինք
այժմ ամենայն զգուշութեամբ կարգե-
սիրտի գրութեան խորը, անոր այս կըր-
կին նախադասութեամբք, որ կ'ըսէ.
« Նախ և յառաջ ամեն բանի վրայ կ'ու-
զեմ տարակուսիլ, ամենայն ինչ պէտք
է բացասել. Բ. երբ կ'ուզեմ երկրա-
յիլ նաև իմանձիս վրայ, չեմ յաջողիր »:
Սակայն եթէ իրաւցընէ, կարգեսիրոս
զճմարտութիւնը խուզարկելու հիմը
կը դնէ՝ նախ ամեն բանի վրայ տարա-
կուսիլ, ամեն բան քննութեան ենթար-
կել, անկէ վերջը չէ կարելի դուրս թո-
ղուլ որ և է ճմարտութիւն մը, ապա
թէ ոչ՝ ի հիմանց կործանած կ'ըլլար իւր
հաստատել ուզած գրութիւնը. և իրօք
իւր երկրորդ նախադասութեամբք կար-
գեսիրոս իբրև իւր ձեռքը կը քակէ ա-
ռաջին նախադասութեան հիմը, ամեն
բան բացասած ժամանակ՝ իբրև հա-
ւաստի ընդունելով իւր անձին ստու-
գութիւնը:

Բայց մենք մէկէն ի մէկ չուզելով
այնպիսի մեծ հանճարոյ մը դառն դա-
տաւոր կանգնիլ, այս հարցը կ'ընենք.
Արդեօք գաղղիացի իմաստասէրն դրա-
կանապէս կեղծելով և առ ժամն կ'երկ-
բայի ամենայն ճմարտութեանց գոյու-
թեանը վրայ, թէ ստուգիւ և սկեպտի-
կեան ոգւով: Արդ եթէ առաջին կեր-

պով, այնուհետև չէ կարելի ժխտել որ
և է ժանուցեալ ճմարտութիւն մը, յոր-
մէ նա կը կարծէ դիւրաւ հրաժարիլ և
ազատ ըլլալ: Իսկ եթէ վերջին կերպով,
այն ժամանակ կ'եղծանէ ամենայն խուզ-
արկութիւն և միջոց՝ ապա այնպիսի
աներկբայ ստուգութեան մը հասնե-
լու՝ զոր ինքը կը համարի:

Կարգեսիրոսի երկրպայական ոճն կե-
ցած ըլլալով չենք տարակուսիր ըսել՝
թէ արդի իմաստասէրք առհասարակ
նաև ՚ի Գաղղիա ամենայն համազօրա-
կան ապացուցութեամբք կը ջանան
հաստատել, և ոմանք ըստ արժանի բա-
ւականին հաստատած են անոր հիմնա-
կան սկզբան խախուտ և հակասական
ըլլալն: Արդարև այսպիսի նախանձա-
ւոր մրցում մը, անկողմնասէր ոգւով
դատելով, բոլորովին իւր իրականաց
մէջն է, եթէ գաղղիացի իմաստասիրին
այս հիմնական առածը, « Խորհիմ՝
ուրեմն գում » իբրև պատճառաբանու-
թիւն (raisonnement) առնելու ըլ-
լանք, և կամ եղառած մը՝ հանդերձ
իւր նախորդիւն և հետևորդիւն՝ այս-
պէս. Ամենայն ոք որ խորհի՝ գոյ, արդ
զի խորհիմ՝ ուրեմն գում: Ուստի եթէ
իրն այսպէս է, ամեննին ալ չի կրնար
արդարանալ կարգեսիրոս, վասն զի միև
նոյն ժամանակ թէ կ'ուզէ ժխտել և թէ
պատճառաբանել: Թերևս մենք չենք
կրնար գաղղիացի իմաստասիրին մտաց
խորը թափ անցնիլ, որ ըմբռնած է այս
սկզբան գորութիւնն և կը ջանայ ցու-
ցընել, թէ ամենայն որ խորհի՝ գոյ: Առ
այս կը հարցընենք. ուսկից գիտէ նա
այս բանս. թերևս խորհուրդ մտաց՝ ո-
րուն վրայ յեցած է կարգեսիրոս, կը
կանխէ քան զգոյութիւն անձին: Այս՝
ոչ միայն կարգեսիրոս, այլ նոյն իսկ
ամենայն չափաւոր միտք չի կրնար ընդ-
ունիլ. որովհետև ոչ ոք կրնայ խորհիլ,
առանց գոյոյ. իսկ արդ նա ամեն բանէ
յառաջ երկրպայութեան մէջ ձգեց իւր
գոյութիւնը, վերստին աւելի ստոյգ
կերպով ապացուցանելու դիտմամբ, ու-
րեմն նա չէ կարող յառաջագունէ (a
priori) ցուցընել իւր մտածութիւնն և

անոր ձեռքով զգոյութիւն անձին և այլոց իրաց : Անշուշտ այս միւս առածէն գիտէ զայն կարգեսիրտ , թէ՛ Որ չեն՝ չկարէ նա և խորհել : Սակայն զայս իսկ առանց հակասութեան ինչպէս կրնայ գիտնալ , եթէ իրաւքընէ ինչպէս տեսնուեցաւ , նա ամեն բան կ'ուզէ ժխտել , և իրը թէ բան չի գիտեր խորհելէն յառաջ , որ կանխաւ ժանօթ ըլլար իրեն : Իսկ եթէ այս սկզբունքս ստիպեալ կ'ընդունի , ինչպատճառակաջ ուրեմն միւս բացայայտ ճշմարտութիւնքը բացասելու : Սակայն կարգեսիրտի երկբայական ոճոյն և անոր հիմնական սկզբան վրայ հաստատուած չէնքին մէկ կողմը միայն զննելով , չենք համարձակիր դեռ փութալ և անոր վերջնական գատաւճիւրը տալ : Վասն զի այս մեծահոգի մեծանուն լուսաւորին քով զմեզ փոքրիկ ասուպ մը կը համարինք , չենք ուզեր առանց չրկահայեաց և զգուշաւոր գիտողութեան ամենայն հանգամանաց՝ անգրագոյնս՝ երագելով մեր ընթացքը՝ երթալ զարնուիլ անոր հետ , որուն զօրաւոր ազգեցութիւնն՝ ամբողջ զփէզարը յեղափոխեց :

Յիրաւի , ինչպէս հաւատանք դիւրաւ , թէ կարգեսիրտի նման լուսափայլ և խորամուխ միտքն՝ թափ անցած չէ ստուգիւ իւր այդ սկզբան խորը և անոր տկարութիւնն իմացած չէ : Այս ամենազօրաւորին կ'երևի մեզի , թէպէտ և ոչ բոլորովին անկարելի : Վասն զի ամենայն մեծամեծ և լուսափայլ հանճարներու և կան խաւարեալ և ազլամզլին ժամը և ժամանակ , որուն մթնալորտին մէջէն անցած ստուերամած և աղօտ ճառագայթները կրկնեւրոսքի (mirage) նման չրլուն կը նկարեն և ընդ օդս , նոյն իսկ ամենաստոյգ իրաց պատկերըն անգամ մտաց վառարանին մէջ , մանաւանդ եթէ երևակայութեամբ տաքցած և անօրացած է այն : Եւ ասոր ապացոյց ոչ միայն պատմութիւնն այլ և հանապազօրեայ փորձը կը ցուցնէ՝ թէ այնչափ մեծ կ'ըլլան և ակնյայտնի անոնց վրիպմունքն՝ որչափ մեծ են այն հանճարքն՝ վասն զի այն մեծութեամբն և

արգասաւորութեամբ մտաց՝ կեդրոնանալով որ և իցէ թեթեւ իրի մը վրայ՝ անոր համեմատ ոչինչն անգամ կը մեծցընեն , եթէ կը ներուի ըսել :

« Կան , ըսաւ Բասքալ , իւրաքանչիւր սրտի յատուկ պատճառներ , զորս միտք չեն ճանչնար » : Արդ եթէ ամեն սրտի կը գտնուին յատուկ պատճառք , որոց միտք այլոց չեն կարող հասու ըլլալ , որչափ առաւել ևս կարգեսիրտի պէս առատ և ընդարձակագոյն սրտին , որ թերևս անոր մտաց ստեղծուածքէն աւելի խոր են և դժուարիմանալի : Սակայն փոյթ չէ , ջանանք բժշկաց նման գէթ անոր արտաքին զարկէն և ներշնչութեանց՝ ըստ կարելոյն անոր խորը իջնել . և ո՛վ գիտէ , գուցէ անոր մտացը մէջ չգտածնիս՝ սրտի շտեմարաններուն մէջ կարենանք գտնել :

« Նախ քան զամենայն՝ յամենայնի կ'ուզեմ՝ երկբայիլ , կ'ըսէ նա , կ'առանձնանամ զիս չրկապատող ամեն բաներէն , որովհետև չեմ գիտեր թէ ստոյգ են անոնք , եթէ ցնորք . կը զգուշանամ հաստատելու կամ բացասելու ինչ մի բայց այս առանձնութեանս մէջ՝ իմ հոգւոյս առջևը ներկայացած կը գտնեմ զիս հանդերձ զգացութեամբ ներքին դործոց և խորհրդոց . Խորնիւ , ուրեմն զով , և այնպիսի կերպով կը զգամ իմ խորհելս՝ որ կը մերժէ ամենայն երկբայութիւն և անստուգութիւն և կ'երաշխաւորէ իմ՝ զոյութիւնս » :

Այս բացատրութեան արտաքին ձևն մթին է և երկխմաստ : Սակայն եթէ 'ի բարին մեկնելու ըլլանք , այն ժամանակ հայրն գաղղիական իմաստասիրութեան ոչ թէ իրրև պատճառաբանութիւն կամ եզառած կը ներկայացընէ մեզի իւր հիմնական առածը , « Խորհիմ՝ ուրեմն գոմ » , այլ որպէս հաստատութիւն իմն ճշմարտութեան իրիք , որ առաջին է և անժխտելի 'ի մէջ այլոց ամենեցուն : Եւ երբ 'ի խորհելոյ յառաջ կը բերէ զգոյութիւն , պէտք չէ համարել իրրև բուն հետեւութիւն ինչ , կամ ինչպէս կը մեկնէ Պալմէս . Թերևս ասով կ'ուզէ կարգեսիրտ հաստատել ճշ-

մարտութիւն մը, որ ուրիշ ճշմարտութեան մէջ պարունակուած է, և լաւ ևս ըսելով, պարզաբանեալ'ի նման է և ա՛նոր հանգիտազօր ։

Արդարև, ինչպէս ամենայն իմաստասիրութիւն կը ճանչնայ և կը հաստատէ 'ի ներքին փորձոյ այս ճշմարտութիւնս, թէ մարդ ունի գիտակցութիւն իւրյաւտուկ մտածութեանց, և թէ այս է կէտ բաժանման ներքին ծանօթութեանց, այսպէս անշուշտ նաև կարգեւիտուզած է ապացուցանել թէ մարդուս միտքը կարող է բացասել և կործանել զամենայն . սակայն 'ի մէջ այն ղէզաղէզ կործանմանց և ոչնչութեան անգամ' կը գտնէ ինք զինքը ։

Ուստի նախնաբար 'ի ներքին փորձառութենէն ծանօթ ըլլալով այս ճշմարտութեանս, յետոյ իւր գրութիւնն, որ Երկրաչափական ոճ կը կոչուի, հաստատել ուզած ժամանակ, իբրև նոր և պարզապէս երկրաչափեանն արգասիք յառաջ կը բերէ իւր բանավարութիւնը բացմարտէ վերջը ծանուցեալ հինգ դոյն ճշմարտութիւնն, իբր է ըսէր . Արդ կարելի է ժխտել զգոյութիւն Աւստուժոյ, աշխարհի և մարդոյ, բայց ոչ նմանապէս ներքին գիտակցութեան . վասն զի այն միայնութիւնն՝ յորում կ'ամփոփի մեր հետքը յետ մերժելոյ զամենայն, դարձեալ կը գտնէ ինք զինքը, և կը գտնէ, միշտ : Ուրեմն թէ առ 'ի զնել հիմն իմաստասիրելոյ և թէ առ 'ի ջախջախել և կարիկել զբերանս սկեպտիկեանց, քան զայս զօրաւոր ձեռնարկութիւն չկայ . որովհետև որչափ և ջանալու ըլլանք արտաքին իրաց հետ 'ի միասին բացասել նաև մեր գոյութիւնն, այնչափ աւելի կը կեզրոնանաք 'ի խորս էութեան մերոյ, և ինքզինքնիս ոչնչացընելու ճիգը աւելի ևս զգալի կ'ընէ մեր գոյութիւնն, — էակ զբամանայի և յանմահութիւն յաւերժական ծնեալ, որուն ոչ մի դաւաճանութիւն չէ կարող մահ հասցընել, մահ նաւանդ թէ ամենայն հարուած նենգութեամբ 'ի նորանոր լուսոյ և անդրազարձութեան հեղեղներ կը յորդէ ա՛նոր վրայ . վասն զի եթէ տարակուսելու ըլլայ իւր զգացութեան վրայ՝ կ'իմանայ թէ կը տարակուսի . եթէ երկրայի նոյն իսկ իւր երկրայելուն վրայ՝ նոյնպէս կը զգայ . և որչափ յաճախէ մարդ իւր տարակուսանքը՝ այնքան աւելի կը խորասուզի յանհամար շարս ներքին գործոց, որոնք անլուելի վկայք են գիտակցութեան և անձին գոյութեան նուրա : Ահաւասիկ ուրեմն, ինչպէս ըսուեցաւ, զիսաւոր պատճառ սրտին կարգեւիտի՛ որ զբաւեց նաև բովանդակ ա՛նոր միտքն և հանճարը : Որովհետև նա ջերմ բրիտոնեայ և ուղղադաւան ըլլալով՝ կ'ուզէր կործանել իւր դարու խառնակ իմաստասիրութիւնն և մասնաւորապէս սկեպտականութիւնը . և թէ իրացընէ անոնց դէմ՝ հնարեց կարգեւիտս իւր դրութիւնն՝ այս յետագայ խօսքերէն կը հանենք . վասն զի կ'ըսէ նա իւր իմաստասիրութեան սկզբանց յառաջաբանին մէջ, թէ « փորձառութիւնը կը ցուցընէ թէ իմաստասէրը յաճախ նուազ տրամախորհող կը գտնուի և իմաստուն քան զուսիկն, որ զուրկ է յիմաստասիրական ծանօթութեանց » : Ուստի մինչև հիմա ըրած դիտողութիւննիս՝ ի նկատի առնելով կ'ըսենք թէ ամենահաւանօրէն կարգեւիտի երկրաչափական ոճն հնարելու շարժառիթն և ոգի տուողն՝ Պիւտոսի մէկ աշխարհաժանօթ առածն եղած է, որ օր մ'ա՛մենայն ինչ ժխտել ուզած ժամանակ երբ իւր բարեկամին հետ կ'երթար, ետևէն շուն մը յարձակեցաւ և ոտքը խածաւ, նա սկսաւ փախչիլ . բայց յետոյ երբ յիշեցուց իրեն բարեկամը թէ իւր վարդապետածին հակառակ կը դործէր, վրայ բերաւ սկեպտիկեանք, թէ անկարելի է ուրանալ զգոյութիւն անձին : Այսպէս ուրեմն գաղղիացի իմաստասիրին ասիէ աւելի ինչ զօրաւոր ձեռնարկութիւն կրնայ ըլլալ . ուղեց նա սկեպտիկեանց՝ նախահօրը՝ և հիմնագորին վկայութեամբը գանձը ջախջախել :

Ուստի եթէ միշտ այս կէտերով մտածելու ըլլայինք՝ թերևս արդարանայր

Կարդեսիոս : Սակայն անաչառ և խիստ քննադատութիւնն , որ սրտի պատճառներէն աւելի մտաց բանաւոր պատճառները կը քննէ , և անոնցմէ աւելի՛ հեղինակին մեզի աւանդած երկասիրութեան բովանդակութիւնը , շատ և շատ կէտերու նկատմամբ կարող է գատաստանի կանչել և գատափետել զնա : Երանի թէ , ո՛վ մեծդ յիմաստասէրս , ժէ դարուն զովողներէդ աւելի՛ ժիժդարու անաչառ գատաւորներն ունեցած ըլլայիր , որով թերևս իմանայիր ուղղել իւրք քու ընթացքդ , չերթալ գահավիժիլ բազմապիսի անտեղութեանց անդնդոց մէջ . այլ մնայիր զյաւիտեանս ժամանակաց լուսապայծառ ՚ի մէջ լուսաորաց աշխարհի և փայլէիր փառօք ոչ միայն ՚ի Գաղղիա՝ այլ և ընդ ամենայն ոլորսս երկրի :

Սակայն եղածն եղած է , և անոր զնահատութիւնն ևս պէտք է որ գործոյն համեմատ ըլլուի : Ընդունայն ջանք է փատտաբանին զյանցաւորը անմեղ երեցընել , ընդունայն տեղ կը վաստակին նոյնպէս և կարդեսիոսեանք կամակորելով անոր մտաց և սրտի սեփական իմաստն՝ ցուցանելու թէ անոր շաւղին այս հիմնական կարծուած սկզբունքը , « խորհիմ՝ ուրեմն գոմ » , բուն տրամախոհական հետևութիւն չէ , այլ հաստատութիւն կամ հրատարակումն ծանուցեալ ճամբարտութեան մը : Վասն զի մէկ ուղիղ հայեացք մը բաւական է ցուցընել թէ որչափ խորխուլ է այդ ենթադրութիւնն՝ ՚ի ստոյգ հիմանէ , քանի բռնազատ : Արդարև , ո՛վ չի տեսներ թէ ուզելով կարդեսիոսեանք այսու հանել զնա յիւր մոլորահետ շաւղէն , և ածել յուղղութիւն , անոր հետ իրենք զիրենք ևս ձգած կ'ըլլան հակասութեան անել լարիւրինթոսի մէջ : Ենթադրելով իսկ թէ այնպէս ըլլայ . սակայն դժուարութիւնք չեն գաղբիր բնաւ , այլ մանաւանդ թէ երթալով կը կրկնապատկին : Եւ իրաւցընէ այսպիսի հարցման մը ինչ գոհացուցիչ պատասխան կրնայ տրուիլ . եթէ ըսելու ըլլա՞նք՝ Այո՛ , ծանուցեալ ճամբարտութեան մը արտայայ-

տութիւն է , բայց ինչ կերպով ճանչցաւ զայն կարդեսիոս . արդեօք անոր ինքիրմէ բացայտու ըլլալուն և բանա վարակիմէ ապացուցութեան արդէն իսկ պէտք չունենալու պատճառաւ , եթէ ընդհակառակն , և ուրիշ բայցա յայտ և պայծառագոյն առածի մը ձեւը : Անհրաժեշտ կերպով այս երկասրբաբանութեան մէկուն տակէն հարկ է որ անցնին կարդեսիոս և իւր համախոհք , եթէ չեն ուզեր ստորերկրեայ ճամբաներով և գաղտագողի փախուստ տալ և կամ զգժուարութիւնը ընդհատել :

Յիրուաի , եթէ այդ առածը , « խորհիմ՝ ուրեմն գոմ » , ինքիրմէ ամենաբացայայտ է և բնաւ տարակոյս չի վերցընել յետ խորհելոյն , ուրեմն ինչպէս կրնար արդարացի կերպով տարակուսիլ անոր վրայ կարդեսիոս , խորհելէն յառաջ . վասն զի առած մ'ըլլալով այն՝ միշտ բացայայտ էր և միշտ աներկբայ : Իսկ եթէ բացացայտ չէր այն ՚ի բանէ , և անոր համար երկբայութեան տակ ձգեց , ուրեմն յետոյ ինչպէս կոցաւ երկբայութեամբ իւր երկբայութիւնը լուծել : Դարձեալ յոռի շրջանով (cercle vicieux) ներքին գիտակցութեան պէտք է դիմել , դարձեալ մի և նոյն անտեղութեանց մէջ հարկ է թափառել :

Սակայն մենք կարդեսիոսեաններէն աւելի՛ զկարդեսիոս անկեղծ կը ճանչընանք . նորէն առ ինքն կը գիմենք , և իւր արդար խոտտովանութեամբը կ'ուզենք դատափճիւնիս յայտնել :

Որչափ և խորախորհուրդ է գաղղիացի իմաստասէրն և մեծահանճար , այնչափ ևս պարզ է և առանց կամակարութեան անոր ընզուն և վարդապետութիւնն , ըսաւ Պալմէս , անոր իմաստասիրական սկզբան զուգակչիւնը բրած ժամանակ , Ֆիլիսթէի , Քանդի , Շէլինկի և Հէկէլի եսական և անդրայեռնային իմաստասիրաց սկզբան հետ (Պալմէս . իմաս . հիմն . հտ . Ա . Գիրք Ա) : Այսպէս ուրեմն մի և նոյն անկեղծութեամբ թողուրք որ վերջին անգամ մի

ևս խօսի նա և մենք լսող միայն հանդ-
սանանք : « Ամեն բան ժխտելէն յետոյ,
կ'ըսէ նա, որոնք մեզի տարակուսական
կ'երևին և ամենայն ինչ ցնորք ենթա-
գրելէն վերջը՝ դիւրին է ճաննալ զԱս-
տուած, զերկինս և զերկիր և նոյն իսկ
մեր մարմինը այս երկրայական բացա-
սութեան մէջ . զողջեա ամեն բանի
վրայ երկբայելով հանդերձ՝ մեր գոյու-
թեան վրայ չենք կարող բնաւ երկրա-
յիլ, որովհետև չենք կրնար ըմբռնել
թէ էակ մը որ խորհի՛ չիցէ իրօք . և
պատձառաքանելով հանդերձ՝ չենք
կրնար չընդունել զայն իբրև ստոյգ,
ինչպէս ՚ի հօրիէ չենք կրնար չընդու-
նել այս առաջին և ստուգագոյն հե-
տևւորիչնս, « խորհիմ՝ ուրեմն գոմ » :
(կարգ. Սկզբ. իմաս. եր. 1, պարբ.
2, և է.) : Արդարև, այս համառօտ
պարբերութեան մէջ խոստովանեցաւ
կարգեսիտ իւր երկբայական ոճոյ
գաղտնիքն, և թէ իրօք գաղտնիք մ'ալ
կայ, ըսելով այս քացատրեան և երկ-
բայութեան մէջ . ինչպէս պատձառա-
քանւորիչն և հետևորիչն յատկանիչ
բացատրութեամբ՝ յայտնեց մեզի, թէ
յիբաւի իւր երկբայական ոճոյ հիմնա-
կան կարծուած սկզբունքը « խորհիմ՝
ուրեմն գոմ », ներքին դիտակցութեան
վրայ հաստատուած և պատճառաբա-
նութեամբ ապացուցած հետևորիչն
մի է և ոչ ինչ աւելի, ինչպէս կանխաւ
ենթադրեցաւ :

Յետ քննելոյ փոքր ՚ի շատէ կարգե-
սիտի երկբայական ոճն և անոր հիմնա-
կան սկզբունքը, զառնանք այժմ անկէ
յառաջ եկած ուրիշ անտեղութեանցը :

Բայտ հինաուրց առածին, խորխորատ
վխորխորատ կը բանայ, և մտորութիւնք
զմտորութիւնս կը ծնանին, հարկ էր որ
ոչ կամ շուտ այս առածս իրագործուէր
՚ի կարգեսիտ այնպիսի վտանգաւոր
շաւիղ մը բանալէն յետոյ : Մեծանուն
իմաստասէրն թերևս այնչափ չէր մեղա-
դրուեր, և թէ իւր երկբայական ոճը
միայն անստոյգ և ապացուցութեան
կարօտ իրաց համար հնարած ըլլար, և
ոչ թէ ամենաբացայայտ, բնազանցա-

կան, երկրաչափական առածից և ՚ի
հաւատոյս յայտնեալ ճշմարտութեանց
համար . շատ աղէկ կ'ըլլար մանաւանդ
եթէ իբրև զօրաւոր ձեռնարկութիւն
մը միայն գործածած ըլլար նա սկեպ-
տիկեանց դէմ, յիւրում՝ իմաստասի-
րութեան, ինչպէս ըրին Ս. Թովմաս,
Ս. Օգոստինոս և այլք բազումք, և վերջին
ժամանակներս Վիկօս Մամիանի, թող-
լով անոր երկբայութեան ոճն և ընդու-
նելով գործարանաց կարևորութիւնը,
Բաւական պատճառ չէ ըսել թէ սկեպ-
տիկեան իմաստասիրաց դէմ ուզեց ա-
նով նոր շաւիղ մը հաստատելը . Այս,
մենք ալ համոզուած ենք ասոր, թէ
սկեպտիկեանց դէմ իբրև անծանօթ և
վերջին պատուար մ'ալ կը հնարէր,
սակայն ոչ միայն սկեպտիկեանց հա-
մար, այլ բոլոր Գաղղիոյ և ապաղայ
դարուց համար էր այն . պէտք էր նա-
խատեսել անոր թերութիւնքը, և թէ
իւր թշուառ հայրենեաց եռանդուն պա-
տանկութիւնն՝ անկէ իբրև փասաբեր
յաղբիւրէ մը ծծելով պիտի յագեցընէր
իւր անյադ մտաց ծարաւն, և Գաղղիոյ
մատենագրութեան թերթերն՝ անոր ե-
րանգովը պիտի գրուէին :

Մամոն կործանեց երբեմն ֆղըշ-
տացւոյ մեծայաղթ շէնքը, բայց անոր
աւերակացը տակ կ'անգնեց անուն յա-
ւիտենից : կարգեսիտ ևս կործանել
կործանեց անուշտ առ ժամանակ մի
ժէ դարու սկեպտիկեանց շինուածքը,
բայց աւանդ, չի կրցաւ նա միշտ յաղ-
թական հանդիսանալ դարուց ՚ի դարս
անոնց փլատակացը վրայ, վասն զի միւս
կողմէն հարկ էր որ անոնց յաջորդաց,
Պայիի, Ռոշըֆուքայի և Մանդվիլլի նոր
զուս բանար և թերևս աւելի լայն և
դիւրամուտ ՚ի սկեպտականութիւն, և
կարծուած օգտակարութենէ աւելի՝
փասաբեր եղաւ անով գիտութեան և
կրօնից, զոր պիտի տեսնենք յընթաց
ճառիս :

կարգեսիտի մեծ վրիպակներէն մէկն
՚ի հոգեխօսութեան՝ է զմտաճնորիչնն՝
հոգոյն իսկորիչն համարելը : Այս
սխալ ենթադրութեան վրայ հաստա-

տուած անշուշտ՝ հնարեց նա իւր դրու-
թեան հիմնական սկիզբը, « խորհիմ-
ուրեմն գոմ », համարելով թէ ամենայն
գոյացութիւն ունի իրեն յատուկ ստո-
բողելի մը, որով մեր մտաց իմանալի
կ'ըլլայ, և թէ հոգին բնաւ խորհելէ չի
դադրիր. վասն զի եթէ դադրելու ը-
լլար՝ մէկէն՝ ՚ի մէկ պիտի կորսնցընէր իւր
ստորոգելին, իսկ եթէ չի դադրիր՝ ու-
րեմն միշտ է, որով և չէ հնար ժխտել
զայն. Սակայն որքան անզօր է այս ենթա-
դրութիւնս և հետո՞ ՚ի ստոյգ ապացու-
ցութեանէ: Արդարև հանապազօրեայ
փորձն և ստոյգ իմաստասիրութիւնը
կը վկայեն թէ հոգին միշտ խորհի,
բայց մտածութիւնն՝ երևոյթ (phéno-
mene) մի է հոգւոյն և ոչ թէ անոր էու-
թիւնն. ապա թէ ոչ երևակայութեան,
յիշողութեան և այլոց կարողութեանց
համար ալ պիտի ըսուէր՝ թէ են էու-
թիւնը հոգւոյ, որով հոգին զանազան
էութիւններ պիտի ունենար իրարու
հակառակ, Դարձեալ կարգեսիրոսի այդ
ենթադրութիւնն ընդունելէն յետոյ, չէ
կարելի մերժել իբրև անոր ամմիջա-
կան հետևանք՝ հոգեփոխութեան ան-
տեղութիւնն. վասն զի խորհուրդը մը-
տաց յար ՚ի փոփոխութեան կան, և ա-
մենայն տեսակ կիւրք և իղձը՝ հօն կ'ե-
ղանակաւորին:

Ինչպէս հոգւոյ էութիւնն ՚ի մտա-
ծութեան՝ այսպէս նաև մարմնոց էու-
թիւնն ՚ի տարաճոչքեան կը զնէ կար-
գեսիրոս. վասն զի, կ'ըսէ նա, մարմնոց
վրայ մտածած ժամանակինս՝ անոնց
տարածութիւնն, այսինքն անոնց երկայ-
նութիւնը, լայնութիւնն և խորութիւնը
մեզի կը ներկայանան պայծառ տեսու-
թեամբ: Յիրաւի, մարմնոց և տարածոցի
զաղափարըը այնպէս յարակից են իրա-
բու, որ անոնցմէ մին մտածած ժամա-
նակ՝ կարելի չէ միւսին գաղափարը չու-
նենալ. սակայն պետք չէ բնաւ զգա-
ղափարական կարգը իրականին հետ
շփոթել, յորում է գաղղիացի իմաստա-
սիրին բովանդակ վրիպակը. դարձեալ
որչափ որ ալ մարմնոց իսկութիւնն
Աստուած մեզմէ զազանի պահած է,

սակայն և այնպէս անոր հակառակ որ և
է ենթադրութեան մ'անտեղութիւնն՝
միտք դիւրաւ կ'ըմբռնեն:

Բայց կարգեսիրոս զեռ անդրազոյն
ևս կը ձկտի՝ վարուելով իւր այդ սխալ
կարծիքէն և կ'ըսէ՝ թէ տարածութիւնն
և կամ միջոցն անսահման է, որովհետև
որչափ հեռանալու ըլլանք և ուր որ
կանկ առնունք, կրնանք միշտ նորանոր
և յանհունս մեծ տարածութիւն երևա-
կայել: Սակայն մենք ուզելով ցուցնել
թէ իրականքն պարզապէս երևակայա-
կան ենթադրութիւն մ'է այս, և անոր
անհունութեանը սահման մը դնելու
համար՝ ձգենք մտքը կեցած տեղերնէս
ուղիղ գիծ մը դէպ ՚ի բևեռ, որչափ որ
երևակայութիւննիս կը բաւէ, ձգենք
անոր վրայէն նաև կոր գիծ մ'ալ յան-
հունս, և դառնանք չափենք, և կը տես-
նենք որ կոր գիծն բնականապէս ուղի-
ղէն մեծ է: Ուստի եթէ միջոցի տա-
րածութիւնն անսահման ըլլար, այն
ատեն երկու անսահման կ'ունենայինք,
որոնք մին մեծ է քան զմիւսն. և ասոր
անտեղութիւնն ո՛վ չիմանար:

Սակայն մենք կարգեսիրոսի այս կրք-
կին մոլորութենէն աւելի՝ Սփինոզայի
համայնաստուածութեանը վրայ կ'ող-
բանք, որուն նախադրունքը դաղղիացի
իմաստասէրը բացաւ: Վասն զի ամս-
տերտամյի իմաստասէրն՝ կարգեսիրոսի
նախաճառեալ այս երկու ստորոգու-
թեանց վրայ, կ'ուզեմ ըսել մտաճոչ-
քեան և տարաճոչքեան վրայ հիմնելով
իւր վարդապետութիւնն՝ բոլոր համա-
գոյս մէկ գոյացութեան վերածեց, ու-
րուն ամենայն մանրամաստունքն այս
վերոյիշեալ կրկին ստորոգութեամբը
մեզի իմանալի կ'ըլլան և կ'եղանակա-
ւորին:

Կարգեսիրոս հոգւոց էութիւնն՝ ՚ի մտա-
ծութեան զնելով և մարմնոց ՚ի տարա-
ծութեան, անհրաժեշտ կերպով պէտք
էր որ ուրիշ մոլորութեան մը մէջ ալ
խարդաւանէր. որովհետև ըստ իւր են-
թադրութեան՝ միջին կէտ մը չկար
որուն վրայ իւր միտքը դարձնէր. պէտք
էր ժխտել անասնոց ոգին կամ կենդա-

նական շունչը, ըսելով թէ անոնց զգացողութեան, յիշողութեան, երևակայութեան, հաճութեան և տհաճութեան ամենայն ներքին և արտաքին գործողութիւնքը, զոր կը տեսնենք պարզապէս մեքենականութեան յտաւարձարձակք են կամ արգասիք (résultants) : Ասոր անտեղութիւնն ամենուն քաջածանօթ ըլլալով, չենք ուզեր խօսքերնիս ընդարձակել . այլ կը բաւականանանք սպանիացի մեծ իմաստասիրի մը հետ ըսել թէ կարգեսիտ ուզելով այսու զկիրսականութիւնն (materialisme) սպաննել, անոր պաշտպանողաց ձեռքը դեռ ամենազօրաւոր զէնք մը տուաւ զինոզկանութիւնը (spiritualisme) մահացնելու . որուն դառն արգասիքը կը կրէ տակաւին Գաղղիա՝ քան զամենայն երկիր :

Կարգեսիտի այս կրկին մոլորութեանց վերարկուին տակ՝ երկու ուրիշ մոլորութիւնք ևս ծածկուած կային, իբրև անոնց հարազատ և թերևս անմիջական ծնունդք, որոնք անկարծելի տգեղութեամբ ՚ի վեր երեցան հոգեբանութեան ջինջ և մաքուր հորիզոնին վրայ :

Արդարև գաղղիացի իմաստասիրին ինչպէս մտաւորական հարազատ երկունքն՝ այսպէս նաև անոր վիժածքն օղակաւոր շղթայի մը պէս իրարու հետ կապակցեալ են : Կարգեսիտ հոգեղէն և մարմնաւոր գոյացութեանց՝ ուրոյն յատուկ ստորոգելի և գործողութիւն տալէն յետոյ, ժխտեց Մալպրանչի հետ բոլորովին հոգւոյն ՚ի մարմնոյն և մարմնոյն ալ հոգւոյն վրայ փոխադարձ ազդեցութիւնքն, որ անոնց զարմանալի և սերտ միութեամբն անժխտելի խոստովանելու է՝ ըսելով, թէ մարմնոյն վրայ ելած տպաւորութիւնքն՝ որք կը հազորդին ՚ի հոգին, և ազատ կամաց ներգործութիւնքն, որ հաւասարապէս կը չարժեն զմարմին՝ ոչ թէ անոնց փոխադարձ ազդեցութեանէն կը կախուին, այլ յատուածային ներկայութեանէն, որ վերջընելով անոնց պատահական պատճառները, անոնց տեղ ուրիշ պատճառ-

ներ կը բերէ, որոնք մարդկային կամ քէն աւելի՛ ըստ աստուածային օրինաց կարգեալ են : Եւ ահաւասիկ ծագումն վարդապետութեան պատահական պատճառաց (causes occasionnelles) :

Ո՛վ չի տեսներ այս մոլորահետ՝ թէ պէտ և բարեմտութեամբ բացած ճամբուն ծայրը կեցած սոսկալի անդունդը, զոր այն մեծ հանճարքն անգիտացան : Արդարև այս գծով եթէ քայլ մի ևս յառաջենք, եղծած կը գանուի մարդու անձնիշխան ազատութիւնն, և Աստուած էն ամենայն բարութեանց՝ կ'ըլլայ պատճառ ոչ միայն մեր բարի գործոց՝ այլ նոյն իսկ չարագործութեանց չարժառիթ, ուսկից ողջախոհ միտք և սիրտ բարեպաշտօն կը խորշի կը մերժի : Այս առաջնոյն նկատմամբ : Ներեցէք, պատահական վերձանողք, այժմ՝ շերկորդը մէջ բերել :

Գաղղիացի իմաստասէրն՝ մարդու ամբողջական էութիւնը կազմող այս կրկին գոյացութեան, կ'ուզեմ ըսել հոգւոյն և մարմնոյն փոխադարձաբար իրարու վրայ չազդելուն իբր անմիջական հետեանք՝ պէտք էր որ հոգւոյն կայանը կամ գահը առանձին տեղ մը զնէր ՚ի մարդն . և իբրք դրաւ նա ՚ի կունկեան կոչուած մասնը :

Մակայն թողով այսպիսի բռնադատ ճիգ մը, որ ոչ ստուգութիւն ունի և ոչ ընդունելի ըլլալու արժանաւորութիւն, կ'ըսենք թէ պարզապէս կարգեսիտի ձկտող և արգասաւոր մտաց գիւտ մի է . և բիրտ ողջախոհ, հաստատուն և մանրազնին փորձառութիւնք անոր հակառակ կ'ապացուցանեն այսօր, թէ հոգին ամբողջ է ամբողջապէս յամենայն ՚ի մասունս մարմնոյ, որպէս յամբողջութեան նորա՝ իւր պարզութեամբը : Չարմանալի հրաշալիք մը, զոր եթէ աստուածային նախախնամութեան ընծայելու ըլլանք, և եթէ բարութեան և ճշմարտասիրութեան մարդկային մտաց, միշտ յայտնապէս երևցած է յընթացս ժամանակաց և ՚ի պատմութեան իմաստասիրութեան, այսինքն է, ինչպէս ուրիշ

մեծամեծ հանճարք , այսպէս նաև կարգեախոս զոգցես միշտ իւր բացած մուրրութեան անդնդոց և խոտորմանց դէմ՝ իւրովի լեռներ և պատուարներ ևս բարձրացուցած են ուղղութեան , և իրենց սխալ վարդապետութեան հակառակ ուղիղ ձեռնարկութիւնն եր պատրաստած : Այս մասին նկատմամբ կը վկայէ գաղղիացի իմաստասէրն , թէ տղու մը թիւը կրճատած ըլլալով , նա անդադար կ'ուլար և կ'ազդակէր թէ ցաւ կը զգար ոչ միայն այն կրճատած մասին մէջ՝ այլ և յինքեան բովանդակ : Հոգւոյն մարմնոյ ամենայն մասանց մէջ ըլլալուն կը վկայէ նոյն իսկ Պօղոս առաքեալն իւր անսխալ բերնով . « Եթէ վշտանայ մի անդամն՝ վշտանան ամենայն անդամը ընդ նմա » : Արդարև այս սքանչելի և տեսակոն վարդապետութեանս փորձը՝ ո՞վ չի զգար գործնականապէս ևս հաշտապազորդ՝ ի յինքեան :

Կարգեախոս՝ ՚ի տրամախոսութեան պայծառ և որիչ գաղափարը , զոր նախ նաբար յիշատակեցինք , կը դնէ իբր գերաճայրեալ հիմն դատելոյ զարտաքիւն ստուգութիւնս : Ըստ այսմ իմաստասիրի , իբր թէ կը գտնէ մարդ ՚ի ներքս գիտակցութեան իւրոյ՝ զմտածութիւնն , որ յինքեան ունի Աստուծոյ գաղափարն և կը ցուցանէ անոր գոյութիւնը : Այս աստուածածանօթութեան գաղափարը՝ անսխալ կանոն մ'է մեզի համար գատելու նաև արտաքին ճշմարտութիւնները , կ'ըսէ նա : Կարգեախոս իւր այս վրիպակաւը ուրիշ մեծագոյն վիճ մը բացաւ իւր աշակերտին առջև :

Մալպրանշ , այս բարեպաշտ և աստուածարեալ հոգին , որ երկրէս աւելի երկնից օդոց մէջ կը սնանէր , հետևելով իւր վարդապետին տեսութեան , որ յինքեան իւր մտածութեան մէջ կը գտնէր Աստուծոյ՝ կարևոր էակին գաղափարն և այս պայծառ գաղափարին մէջ կը նկատէր ոչ միայն զին գերբուն , այլ և գոտուգութիւնս ամենայն էակաց , ուզեց անոր գծած շաւղէն բարձրագոյն թռիչ մ'ալ առնուլ , վեր-

ելը գործելով իւր մտաց զկարգեախոս և զմարդկային տկարութիւնն՝ անցաւ ընդ անհուն անջրպետութիւն , որ կարևոր էակին էութիւնը՝ յայլալականէն կ'անջրպետէ , ըսելով : Մարդիկ հաղորդակից ըլլալով Բանին Աստուծոյ և բարութեան նորա , կարող են զամենայն ինչ յԱստուած տեսնել դէմ յանդիման տեսութեամբ , և այս տեսութիւնս է ամենաստոյգ և երբէք զմարդ չի խաբեր :

Յիրաւի , բարձրագոյն աւիւն . բայց ո՞վ չի գիտեր թէ բարձրութիւնը միշտ ճշմարտութիւն չէ , այլ յաճախ անգամ մոլորութեան առիթ , որուն գագաթը կը ձգուի յանզգաստից մարդուս միտքն՝ իւր ուղիղ տեսութեանէն աւելի , յօտար հոգմոց վարուելով : Սակայն Մալպրանշի համար կ'ըսենք միշտ՝ թէ չարութենէ աւելի եռանդեամբ հոգւոյն հօն մղուեցաւ : Ուստի այսպիսի դերաշխարհիկ պարզ և մ'երանելեաց միայն յերկինս շնորհուած է և անհիմն է երազել զայն առաջին կանոն ստուգութեան մարդկան , զոր Աստուած ինքնին ՚ի բնէ զլացեր է մեզի այս կենաց մէջ : Իրաւցընէ , թող ըսեն մեր պատուական վերծանողը , ասկէ աւելի ծաղրական բան կրնայ ըլլալ քան տեսնել մէկը՝ որ կամ զբահայրական կամ չափաբերական և կամ ո՞ր և իցէ առաջարկութիւն մը լուծելու համար , միտքը առ Աստուած վերացուցած և ափշած նայի՝ թէ կ'երևին արդեօք անոր նախատարերքն : Ուրեմն ինչպէս Մալպրանշին՝ այսպէս ալ կարգեախոսի պայծառ գաղափարը , չի կրնար ըլլալ առաջին և ընդհանուր կանոն կամ հիմն դատելոյ զստուգութիւն : Վասն զի ստուգութեան առաջին և գերածայրեալ կանոնը պէտք է որ ըլլայ որ յիրիւն (objective), այսինքն է իրական և արտաքոյ ՚ի մէջը . իսկ ընդհակառակն կարգեախոսի պայծառ և որիչ բուռ գաղափարն է որ յիւ (subjective), կ'ուզուի մտել մտաւորական է , ՚ի ներքս ՚ի մեզ , և միայն ներքին գործոց համար : Արդարև բան մը դեռ չի տեսած՝ ինչպէս անոր ստուգու-

թեանը համագումրինը . գաղափարական գաղափար միայն զիրականը որոշել, որ- չափ անգամ անճիղ չէ և այլազգ, որ- չափ ցնորական և երևակայութեան ամուլ արգասիք :

Սակայն կարգեսիտս իրական և ներ- կայ յայտորութեանց մէջ չբաւականա- նալով կենալ և սերմանել իւր մտաց որումը, անդրագոյնս ևս 'ի բնադանցու- թեան ձկտեցոյց իւր հրացայտ և երա- գահաս տեսութիւնը, կ'ուզեմ ըսել, պարզապէս 'ի հնարաւորս (possibles), որոնք թէպէտ և այժմ իրօք չեն, բայց անոնց գոյութիւնն 'ի բնէ անկարելի չէ, կամ լաւ ևս, կրնան գալ 'ի գոյու- թիւն առանց հակասութեան, ըսելով թէ ամենայն կարելի բան՝ Աստուծոյ կամօքէն կը կախուի :

Ուստի ըստ ենթադրութեան գաղ- զիացի իմաստասիրին, Աստուած կա- ըող է այնպէս ընել որ բոլորակն ըւ- լայ մի և նոյն ժամանակ ևս քառա- կուսի, առանց բարոյակ ըլլալէ դադրե- լու կամ անոր էութեան նախատարեքը կորսնցնելու : Եթէ հարցնենք ինչ պատճառաւ արդեօք . Աստուծոյ ամե- նակարողութիւնն՝ իւր անզօր ձեռնար- կութեանը ապացոյց կը բերէ կարգե- սիտս : Բայց յայտնապէս կը սխալի նա . որովհետև Աստուծոյ ամենակարողու- թիւնն անգամ՝ հակասութեանց առջև գործելէ կը դադրի :

Թերևս տէրունեան այս առածին վրայ յեցած կարգեսիտս՝ յանհնարա- ւորս չարաչար կ'արշաւէ, որ կ'ըսէ . « Անհնարինք 'ի մարդկանէ՝ հնարա- ւորք են առ 'ի յԱստուծոյ » : Բայց մենք կ'ըսենք, թէ հօս ոչ միայն մարդկեղէն մտաց, այլ նոյն իսկ աստուածային ան- հուն զօրութեան՝ անկարելի է խորհել և կամ ստեղծել 'ի նոյն ժամանակի՝ իր ինչ՝ որ ըլլայ և չըլլայ, և կամ մարդ ե- դած առեն՝ նոյնը ըլլայ նաև քար . զի նա 'ի յաւիտենից և ազատօրէն այս ինչ բանն՝ այս ինչ օրինակիւս կամ նախա- տարեք (types) նկատեց, և չէ կարող փոխել զայն յայլ ինչ՝ առանց փոխելու իւր անփոփոխ իմացականութեան նա-

խագաղափարքը : Ուրեմն ուզել գաղ- զիացի իմաստասիրին հետ բարեպաշ- տութեանը Աստուծոյ ամենակարողու- թիւնը յանհնարաւորս հաստատել, է ա- մենամեծ ամպարաշտութեամբ՝ յաւիտե- նական և անփոփոխ ճշմարտութեանց հետ՝ նաև անոր էութիւնն եղծանել :

Ուրեմն ամենայն հնարաւոր իր, ոչ թէ յաստուածային կամաց կը կախուի, ինչպէս կ'ենթադրէ կարգեսիտս, այլ յիմացականութենէն և կամ 'ի մտաց նորին . ինչպէս օրինակ իմն, նախատիպը իրագործուելիք բանի մը՝ 'ի մտաւորա- կան տեսութենէ արուեստագործին : Բանն յաւիտենական և անայլալկական լայն ինչպէս որ 'ի յաւիտենից նկատեց ամենայն իրաց ժրագիրքն և յինքեան ունի անոնց էութեան նախատիպքը, այնպէս ևս անփոփոխ կը մնան անոնք զյաւիտեանս ժամանակաց . վասն զի յԱստուած՝ ամենայն ինչ անփոփոխ է, ամենայն ինչ յաւիտենական է, կ'ըսեն Ս . Թովմաս և չարք առ հասարակ, և թէ յաստուածային պարագութիւնս ևս կայ բարեվայելուչ և զարմանալի կարգ մը, որով կամօքն Աստուծոյ կը հետևի անոր իմացութեան, բայց ա- ռանց ընաւ յետ և առաջութեան :

Ենտ այս ամենայն քննութեանց, ցաւօք սրտի կը ստիպուիք վերջա- պէս նէ ապօրէնեցի նշանաւոր գրի մը հետ տալ մեր տեսութեան վերջնա- կան դատավճիռն, ըսելով . քէ աշդա- րև այս բարեմիտ բարեւեր հոգիև, առանց շարոքեան, ակամայ, և մը- նալով միշտ բարի քրիստոնեայ և բարի ուղղադարձուն, պատճառ և դառ ամենայն հերձոքաճոց և մոլորոք- քեանց յիմաստասիրութեան, ինչ- պէս լռուտեր 'ի հաշտոյնս և 'ի կրօ- նակախիև :

Կարգեսիտս իւր այսչափ իմաստա- սիրական մարդութեամբք հանդերձ, թերևս կարենար արգարանալ, այնու՝ վասն զի յերկրայս ազատութիւն է : Սակայն 'ի հաւատոյս անգամ յանցա- ւոր է նա եթէ խստիւ դատելու ըլլանք . և Քրիստոսի Եկեղեցւոյ սրտին իսկ մեծ

վէրք մը բացաւ, որովհետեւ դաղղիա-
ցի իմաստասէրն իւր երկբայական ու-
ճով, թէպէտ և առժամանակեայ, թէ-
պէտ և կեղծեօք, հաւատոյ և յայտնեալ
ճշմարտութիւնքն ևս ժխտեց և բանա-
կան խուզարկութեան և ապացուցու-
թեան նիւթ բրաւ, որոնք 'ի հաւատալ
միայն մեզի կ'առաջարկուին. և աս-
տուածային անսուտ վկայութենէն ա-
ւելի մարդկեղէն մտաց և անձնական
վկայութեան վրայ հաստատեց զանոնք,
որոնք անհունս 'ի վեր են քան գտեսու-
թիւն մտաց, և ներքին գիտակցութենէ
և մտածութենէ բնաւ կախումն չունին,
այլ արտաքոյ՝ աւանդութեամբ կը ստա-
ցուին :

Արդ 'ի նկատի ունելով այս ամեն
բանը, կը հարցընենք 'ի վերջ ամենայնի
մեր պատուական վերծանողաց. կար-
դեսիոսեան շաւիղն դեռ ինչ անծանօթ
լերանց և անդիտք մէջ կրնայ տանիլ
արդեօք, և թէ պէտք է անոր գաղտ-
նիքն իմանալէն յետոյ փոքր 'ի շատէ,
դարձեալ անոր հետևիլ: Եթէ տակա-
ւին այդ ևս պատասխանելու ըլլայ մէկն,
մենք չենք ուզեր ընդունայն տեղ բա-
նակուել. այլ անոր շաւիղը դիմաց-
նիս ունենալով, այսպէս կը ձեռնար-
կենք . Ա. կարդեսիոսի երկբայական
ոճն ամեն բանի վրայ տարակուսելու
դնել իբրև կէտ բաժանման կամ սկիզ-
բըն խուզարկութեան ճշմարտութեանց՝
ծաղրական է և անտեղի արդի ամե-
նայն գիտնոց և ուսումնական աշխար-
հի դիմաց: Երբաւի, ասկէ աւելի ինչ
ծարրական բան կրնայ ըլլալ՝ քան առ-
նու իբրև կանոն ստուգութեան և բա-
ցայայտութեան՝ զբացասութիւնն ամե-
նայն ստուգութեանց և բացայայտու-
թեանց. իսկ որովհետև կարդեսիոսեան
երկբայական ոճը նախ ամեն բան ժըխ-
տելու մէջ կը կայանայ, ուրեմն հակա-
սական է այն և ծաղրելի. և ով որ կ'ու-
զէ զայն հիմն դնելով իմաստասիրել
կամ զճշմարտութիւնը վստորուել, անոր
կը նմանի, կ'ըսէ իմաստասէր ոք հան-
ճարեզ, որ կ'ուզէ խաւարէն լոյս առ-
նուլ, և ոչնչէն՝ ինչ մի: Իսկ արդ. մենք

որ խաւարէն աւելի զլոյս կը սիրենք և
ոչնչէ աւելի իր ինչ ստայգ, պէտք ենք
զպուշանալ այնպիսի դրութեան ան-
տեղութենէն նաև ըստ երկուց զլսոց :
Բ. Արդ որջխտհ լոյս բանին կը թեւա-
դրէ, թէ ինչպէս գիտակցութիւնը մար-
դուս ներքին և փոքրիկ աշխարհի գոր-
ծոց ստուգութիւնը կ'ապացուցանէ,
այսպէս ալ զգայարանքնիս՝ արտաքին
աշխարհաց դոյութիւնը կ'երաշխաւո-
րեն, և անոնց նկատմամբ՝ մէկմէկ ան-
մոյար առաջնորդներ են մեզի և ուսու-
ցիչք: Ամեննին բանադատութեան գործ
չէ մէկուն վրայ միայն վստահիլ և միւս-
ները ժխտել, մանաւանդ թէ հակա-
սութիւն իսկ գլխովին: Իսկ որովհետև
կարդեսիոս իւր երկբայական ոճով այս
պէս կ'ուզէ յառաջ խաղալ, ուրեմն
անտեղի է այն և անըդունելի: Գ. Ոչ
ոք կը տարակուսի թէ մարդիկ՝ գաղա-
փարականէն աւելի՝ իրական աշխարհի
մէջ կ'ապրին, և անոնց սերտ յարբե-
րութիւնը զիրենք չըլլապատող տարե-
րաց հետ՝ հաւասարապէս ճշմարտու-
թիւն է: Ամենայն արարածք՝ մարդուս
աչաց առջև կը ծնանին և կը մեռնին.
արեգակն և լուսին անոր զլսուոն վրայ
միշտ կ'ելլեն կը մտնեն, աստղերն առ-
հասարակ անհուն ծոցաւորութեան մի-
ջէն դիչեր ցորեկ անոր նորանոր աշխար-
հաց, լուսոյ և դիտութեան հեղեղներ
կը հոսեն. այսպէս նաև բովանդակ եր-
կինք և երկիր հանդերձ իւր տիեզերա-
կան կարգօք և դարմանալեօք՝ գոգցեալ
մարդուս տեսակիտին ամենափոքրիկ
վստարանին մէջ միշտ կը բարգաւաճի
և կը յառաջէ դէպ յիւր վախճանը:
Մարդս կը տեսնէ, կը զգայ և ինքն ալ
անոնց հետ իւր ընթացքը կ'երագէ, և
նոյն իսկ իւր ներքին աշխարհի ծանօ-
թութեանց և գաղափարական կարգաց
մեծադոյն մասն՝ անոնց պարտական է:
Ուստի եթէ ներքին գիտակցութեան
վրայ միայն վստահելով մերժենք զգա-
յարանաց վկայութիւնը, կը դադրին
բոլոր այս արտաքին և գիմացութիւնն
բարգաւաւորող յարակցութիւնքը. կը
հալածուի մարդ իւր ընդարձակ տէրու-

թենէն յանձուկ արտարանս . կը ջնջուին հետզհետէ մոռացութեամբ անոր ներքին գաղափարներն ևս , և տարտամութեան , տարակուսանաց չօգտօնելի խաւար մ'է որ կը պատէ անկէ վերջը անոր մտաց հորիզոնին վրայ :

Այս ճշմարտութիւնս աւելի զգալի կ'ըլլար՝ եթէ կարենայինք իրօք անցնել 'ի ծնէ կուրի մը և խուլի ներսը և քննել անոր վերնադասաւան : Ո՛հ , ինչպիսի ամայութիւն ծանօթութեանց , ինչ չորութիւն և ցամաքութիւն սրտի , ինչպիսի խառնակութիւն մտաւորական կարողութեանց . արդարև հօն գտնուող սակաւաթիւ գաղափարքն անգամ՝ մեռելատիպ ուրուականաց պէս կան մնան որպէս դի անկենդան , և թափուր 'ի բեղնաւորութենէ : Չէ և չէ կարելի այն բանաւոր աշխարհի և աստուածատունկ անդաստանին մէջ , որուն զգայարանաց գոները գոցուած են 'ի բնէ , գտնել նշոյլ մը լուսոյ կամ գէթ ծաղիկ մի արտաբեր վայելչութեան և գեղոյ բնութեան : Անոր իմացականութիւնն՝ հանդերձ երևակայութեամբ և յիշողական կարողութիւններով՝ բոցցես յուլութեան և անգործ վիճակի մէջ է , արտաքին իրաց նկատմամբ , զրկուելով անոնց իւրաքանչիւրին իւր յատուկ առարկայէն , որոնց ըզգալի տեսութիւնն իբրև սերմն ծննդական՝ կարող է միայն մտաց հետ ունեցած սերտ յարակցութեամբ բեղնաւորել և պտղաբերել անոր իմացական յղացմունքը : Այսպէս բոլոր անոր արդէն իսկ սահմանափակ էութիւնը , աւելի ևս սահմանաւորուած է 'ի մի կէտ ներքին գիտակցութեան , և ստորերկրեայ թաղուած խորդի մը կը նմանի : Գիտակցութիւնն , այո՛ , միայն զիշերարթուն և կոյր բուխճակի պէս , վասն զի արտաքին և զգալի աշխարհաց հետ զինքն հաղորդող զգայունքը կը պակսին , և կեցած զիշեր գորևկ այն կրտակեր և խաւարամած աշխարհի զերբկացը վրայ կը հսկէ , միայն անոր էութիւնը ուրիշ էութեանց հետ չպիտիւնելու համար , Հազար անգամ թույն երկայացընէ

անոր գիմաց բնագիտութեան վարժապետը լուսոյ հրաշալիքն . այլ 'ի զօր . նա չէ կարող գիտակցութեամբ միայն անոր ստուգութեան և գաղտնեացը իրազգաց ըլլալ : Բիւրիցօ բիրթ թող յեղյիղէ ձայնաւորութեան և երածըլտութեան զարմանալիքն և անոր հիանալի օրէնքը , եթէ նա 'ի բնէ խուլ և համր է , ընդունայն է ամենայն , և գիտակցութեան ձեռքով չի կրնար անոր ճշմարտութեան հասնիլ . այսպէս մտածելու երբ նաև միացած զբայարանաց ծանօթութեանց նկատմամբ : Վասն զի փորձաւորութեամբ ծանուցեալ ճշմարտութիւն մ'է , թէ ամենայն կարողութիւն յայնմ կարգի միայն կարող է գործել , յորում 'ի բնէ հաստատուեցաւ . կ'ուզեմ ըսել գաղափարականն՝ և մտաւորականն՝ 'ի գաղափարականին , իսկ իրականն և գործարանաւորն՝ յիրականին , թէպէտ և անոնց ներքին յարակցութիւնն և իրարու վրայ ունեցած ազդեցութիւնն անտարակուսելի է : Ուստի ասկէ յառաջ կու գայ անմխտելի հետևութեամբ թէ ներքին գիտակցութիւնն՝ որ յիս է , ինք իրմէ չի կրնար անցնիլ 'ի ծանօթութիւն ուրիշ կարգի ճշմարտութեան մը , որ յիրիւն է (objective) , առանց արտաքին և ըզգալի միջոցաց , որք են զգայարանք : Գիտակցութիւնն առ առաւելն ուրիշ կարողութեանց գոյութիւնը միայն կարող է մեզի երաշխաւորել . օրինակ իմն՝ թէ սպեր ունինք և անոնցմով լոյս և մարմիններ կը տեսնենք . և ականջներ , որոնցմով ձայներ կը լսենք . բայց սակայն չի կրնար երաշխաւորել թէ ամենայն տեսածնիս և լսածնիս ճշմարիտ է , և թէ զգայութիւնք մեր զմեզ 'ի պատրանս բնու չեն արկաներ : Այս բանս անոր սահմանէն դուրս է , և ինք իրմէ ծանօթ է բացայայտ , առանց իսկ վկայութեան գիտակցութեան . որովհետև բանը կը թեւազդէ թէ յԱստուծոյ հաստեալ որ և է կարողութիւն մը՝ երբ իւր կարգի և առարկայի մէջ կը գործէ՝ անսխալ է : Իսկ արդ կարգեսիտս իւր երկրայական ոճով այսպէս ամենայն կա

բողութիւն մերժելով միայն ներքին գիտակցութեան վրայ կը հաստատէ իմաստասիրելու սկզբունքը, ուրեմն անընդունելի է և եղծիչ գիտութեան: Ուստի պէտք չէ այն շաւղին հետևիլ, եթէ չենք ուզեր քիչ մը յառաջ նկարագրած վիճակի մէջ անձամբ զանձինս արկանել: Թող չլարմանան և չպարտաւեն զմեզ մեր վերժանողը, վասն զի նոյն իսկ այս գրութեան մեծանուն հեղինակն անգամ միայն իւր իմաստասիրական շաւղին հնարած ժամանակ այդ տեսական վարդապետութիւնն ըրաւ, իսկ բոլոր իւր գործնական կենսայր մէջ չենք տարակուսիր բնաւ ըսել թէ անոր հակառակը գործեց:

Եւտ անընդունելի ցուցանելոյ զկարգեախոսեան գրութիւնն, կը մնայ քննել այժմ թէ ի՞նչ շաւղ բռնելու է կատարեալ իմաստութեան հասնելու, և թէ յորո՞ւմ պէտք է զննել սկիզբն խուզարկելոյ զճշմարտութիւնն:

Ինչպէս ըսինք նախնարար, ահաւասիկ թաւալեցան արդարև կրկին ոգորմունք դարուց և յեղափոխութեանց, կ'ուզեմ ըսել բողոքական վարդապետութեան և վիճից և կարգեախոսեան իմաստասիրութեան, որ երթալով կ'իյնայ և կը նուազի. վասն զի այժմ զուտ կարգեախոսեան մը եթէ ճրագով ալ փնտրելու ըլլանք՝ չի գտնուիր. հանձարեղն վիզոյ, որ ուղեց կարգեախոսեանէն ընթանալ թողուց, ինչպէս տեսանք, անոր երկբայական ոճը: Ուրեմն պէտք է վերջապէս վերադառնալ յետալական կամ ճեմականաց իմաստասիրութիւնն, զոր Արիստոտէլ հիմնեց և Ս. Թովմաս փառք բարձրացոյց և կատարելագործեց. և այժմ երթալով կը հռչակուի ոչ միայն ի կղերանոցս ուղղափառաց, այլ նոյն իսկ ի համալսարանս բողոքականաց: Սրբազան Քահանայապետն Լեոն ԺԳ, յետ երկայն և հասուն քննութեան՝ այս միայն բնարեց իբրև զօրաւոր զէնք և միակ միջոց՝ դէմ դնելու ԺԹ գարու կրօնական, ոչստումնական և քաղաքական զեղծմանց: Արդէն իսկ յետ Պարոնի և կար-

գեախոսի, ԺԸ դարն զգաց մեծապէս անոր անկման աղետալի հետևանքը. և ով գիտէ թէ Գաղղիոյ մէջ և այլուր ծագած խռովայոյց յեղափոխութիւնն անոր արգասիք չէին: Սակայն ԺԹ դարը՝ յորում բանականաց անտեղութեամբ հանդերձ՝ աւելի ծանր և զգուշաւոր ընթացք մ'առին գիտութիւնք, իմաստունք և ուսումնադէտք առ հասարակ զգացին անոր տեսական սկզբանց հաստատութիւնն և կարևորութիւնն: Քահանայապետին չրջաբերականն հրատարակուելէն յառաջ Արիստոտելի տրամաբանութիւնն զբարոցաց մէջ ամենագործածական եղած էր: Իսկ այժմ գրեթէ ամենայն ուսումնական երկախրութիւնք և դասագիրք անոր սկզբանքը վրայ հիմնուած, և երկրայափութեան պէս ամեն բան ճշգող ոճով ի լոյս կ'ընծայուին:

Սակայն մենք անոր ոճէն աւելի վարդապետական ուղղութիւնքն և վրսեմութիւնը կը փնտրուենք. և այն շաւղին մէջ փակուելէն աւելի, ընտրողական (électique) կոչուած շաւղէն կ'ախորժինք ընթանալ, որ ամենին այս ինչ կամ այն կուսակցութեան չծառայելով, անոնց ի կրից պատճառաւ անտեղութիւններէն ևս ազատ է. շաւղ մը՝ որ ամենուն բարւոյն և գեղեցկին ծագիամբքը միայն պծնեալ է, և առանց մերժելու հրեշտակոյին վարդապետին և ճեմականաց իմաստասիրական շաւղը, մանաւանդ թէ հաւասարաշափ անոր ընթանալով անոր դժուարութեանց և թերութեանց սարերն ու ձորերն և ժայռուտ անցքերը կը ջանայ հորդել, աւելի դիւրագնալի, ապահով և ժողովրդական ընելու վտանգանու: Այս շաւղով ընթացող ուսումնասէր ճանապարհորդք և անոր վրայ դասագիրք յօրինողքն են Յ. Պալմէս սպանիացին, Յ. Սանսեբրինոս նեպոլսեցի, Սինեսորիէլլոյ, Փոխկոս, Թամպայ և Լիպերագորէ. ամենքն ալ ծանօթ, որոնց հանձարոյ բարձրութեան հետ ողջամտութիւնն ևս հռչակուած է:

Ուստի այս իմաստասիրաց և միան-

զամայն բնական փորձառութեան ու գեղով համաձայն ընթանալ, կ'ըսենք թէ՛ իմաստասիրութեան սկիզբը կամ հիմն խոշորակերպ գնչմարտուքին, ՚ի տեսակակնին՝ նախնական և առհնարացայայտ սկզբանց կամ առաջից վրայ պետք է հաստատել, որոնք մեզի ծանօթանալու համար, ոչ միայն բնաուրիշ ապացուցութեան հարկաւորութիւն չունին, այլ մանաւանդ թէ ամենքն ալ լուսապայծառ արեգակներ են և ճաճանչը անեղծ լուսոյ յաւիտեանական ճշմարտութեան, որ անոր բաւութեան վառարանէն ծագելով կը լուսաւորեն մեր մտաց խաւարը՝ տեսնելու մնացած ճշմարտութիւնները, իսկ ՚ի փորձառականին, պէտք է զննել զգայարանաց ևս և ներքին գիտակցութեան քացայայտ հաստոյութեան վրայ:

Այս ճշմարիտ վարդապետութեան ստուգութիւնն և բնութեան համաձայն ընթանալն երաշխաւորելու համար, նկատենք նախ մարդկային բնութիւնը:

Արեւոտոտէլէն սկսեալ՝ Ազուրնացոյ և այլ մեծողոյն իմաստասիրաց մարդկային բնութեան՝ լուսազոյն, ճիշդ և համառօտ տուած սահմանն՝ է Քսենար կենդանի: Արդարև եթէ մարդու բանաւոր մասը կազմող գլխաւոր տարբեր են իմացականութիւն կամ բանն և ներքին գիտակցութիւնն, իսկ կենդանական մասին՝ զգայարանն և զգացութիւնն, ուրեմն անհրաժեշտ կերպով կը հետեի, թէ ինչպէս մարդկային բնութեան ամբողջութիւնն՝ այսպէս նաև անոր ամենայն գործողութիւնը և ծանօթութիւններն՝ անոր համեմատական պիտի ըլլան, կամ պարզազոյն կերպով ըսելով, անոր բնութիւնը կազմող իմանալի և զգալի կարողութեանց ձեռքով պէտք են կատարուիլ: Վասն զի յընդհակառակն ինչպէս մարդ մարդ չըսուի, այսպէս ալ անոր գործողութիւնը մարդկային չեն կրնար ըսուիլ:

Խնդիրն այսպէս պարզելէն յետոյ՝ դառնանք այժմ կանխաւ առաջարկ

կած նախադասութեանց եզրակացութեանը:

Առաջինոյն համար կ'ըսենք, թէ կէտ բաժանման ՚ի յիմաստասիրութեան՝ է երկ կամ վարձանն՝ առ որ յետ ստանալոյ մեր ուսումնական կամ որ և իցէ ծանօթութիւնը՝ կը վերադառնանք սակայն այնպիսի ծանօթութիւն մը կատարելապէս ստանալու համար ՚ի տեսական խուզարկութեան, պէտք է որ մարդու միտքն ունենայ իւր դիմաց նախնական (a priori) և բացայայտ առաձներ, ինչպէս արուեստաւորն ունի իւր մտքին մէջ կամ այաց առջև իրի մը նախադառնալարն. և անոնց վրայ հիմնած անյղիլի կերպով կարենայ բարձրացնել իւր գիտութեան աշտարակն. ապա թէ ոչ ընդունայն տեղ կը շանայ մարդ արդասիք մը յառաջ բերել առանց պատճառի, և կամ տուն մը շինել առանց հիման: Իսկ որովհետև ստուգիւ այս սկզբանց վրայ հաստատուած է իմաստասիրելու բաժանման կէտն, ուրեմն ասոնք են հիմն խուզարկութեան ճշմարտութեան, ըստ տեսական մասին:

Իսկ երկրորդ նախադասութիւնն ապացուցանելու համար՝ այսպէս կ'ըսենք, թէ իրական և զգալի աշխարհաց մէջ ընտանիքին անբացասելի ճշմարտութիւն մ'ըլլալով, պէտք է փնտրուել այնպիսի միջոց մը՝ որ ուղղակի և առանց ուրիշ միջնորդի կարենայ ցուցնել մեզի անոր ստոյգ գոյութիւնն և հաստատել ներքին մարդոյն կամ խորհող մասին ընդ արտաքինոց գերտ յարաբերութիւն մը, և անոր սիրտութեան նկիթ մատակարարել. որովհետև ներկայ վիճակիս մէջ, ինչպէս զուրցուցաւ, խորհող մարդը չէ կարող անոխալ քոյլ մ'առնել ՚ի փորձառականին՝ առանց զգացող կամ արտաքին մարդոյն, ինչպէս կոյրն՝ առանց առաջնորդի, թէպէտ և անկախ է ՚ի նմանէ և կարող է ոտն յոտանէ շարժել: Վասն զի միշտ զգայարանը են որ ուղղակի կ'երաշխաւորեն մեզի արտաքին աշխարհաց գոյութիւնն և անոնց հետ զմեզ

կը հաղորդեն, և ներքին գիտակցութիւնն զգայութեանց օգնելով, կ'ըսեմ: որովհետև հանապազօրեայ փորձն իսկ կը ցուցնէ թէ ներքին գիտակցութիւնն անգամ զգայարանաց և գործարանաց խանդարման կամ անգործութեան ժամանակ, ինչպէս օրինակ իմն, մարդու մարած կամ քուն եղած ժամանակ՝ ինքն ալ գողցես կը մարի և կը քնանայ, եթէ կը ներուի ըսել: Ուրիմն սկիզբն իմաստասիրական խուզարկութեան 'ի փորձառականին՝ պէտք է ըզգայարանաց վրայ դնել, առանց զգայարանականաց և լոքի և Գոնտիլիաքի ախտը ախտանալու:

Այսպէս ուրեմն նախնական և ամենաբացայայտ առածներն մէկ կողմանէ, միւս կողմանէ ալ զգայարանք ընդ ներքին գիտակցութեան՝ են կրկին աչք իմաստասիրական խուզարկութեան, նոյնք և կրկին ոտք: Այս կրկին իմանալի և զգալի հեռագիտակօք զինեալ մար-

դուս միտքը՝ կարող է կատարելապէս թեւակոխել 'ի ծանօթութիւնս գիտութեան, որուն ասպարէզն թէպէտ և անձայր, թէպէտ և դիւրագայթ, բայց նա առանց յոգնելու և առանց գայթապելու կարող է գիշեր ցորեկ յառաջել: Բիւր անգամ թող ժամանակն և յառաջագիմութիւնն նորանոր լերանց կարկառներ բարձրացնեն, նա կարող է դարձեալ իւր թռիչքը դեռ անդրագոյնս ձգել, նպատակ դնելով իւր տեսութեան միշտ զարփին ճշմարտութեան. մինչև որ յաջողի օր մ' իրապէս այն առասպելեալ փիւնիկ հաւ թռչնոյ նման թողլով իւր մահկանացութիւնն և անկատարութիւնքը, անոր հրածին բոցոյն վրայէն յանմահութիւն և 'ի կատարեալ իմաստութիւն հանդերձելոց իրաց փոխուիլ, որ է վերջին և գերագոյն նպատակ իմաստասիրական ամենայն խուզարկութեան և սրտի մարդկան:

Հ. Բ. ՍՈՐԿԻՍԵԱՆ